ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻՑ

24 ԱՊՐԻԼԻ 1998 Թ.

№ 8—9 (117—118)

ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

Բացառիկ



ՄԵՆՔ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ՛Ք...

Հիշողություն... Հիշողություն՝ պատմական ու սովորական, մարդկային: Հիշողություն, որը ուղեցույց ջահը է վաղվա օրվա, ապագայի, մեր ինքնության:

Քանի՜ դար ու քանի՜-քանի՜ բռնապետներ, որոնք ցանկացել են ստրկացնել մեր ժողովրդին ու համոզվելով, որ սրի ու սպանդի միջոցով այդ հնարավոր չէ, փորձել են զրկել մեզ հիշողությունից: Ի՞նչ կլիներ, եթե այդ հաջողվեր նրանց: Այսինքն, մանուկը մոռանար իր ծնողներին, ծնողները՝ հարազատ ժողովրդին, ժողովուրդը՝ հողն ու օջախը, երկիրն ու երկինքը, որ միասին Հայաստանն է, Հայկական բարձրավանդակը, մեր բնօրրանը:

Չմոռացա՜նք:

Չմոռացանք մեր արժեքները, մեր հպարտությունը: Չմոռացանք մեր ցավերն ու կորուստները, մեր վիշտը:

1915... Դա թշնամու դիվային ծրագիրն էր, արյունարբու, գազանային բնազդով, ավերումի ու հրդեհի կարոտ թշնամու ծրագիրը: Դիակներով ու արյունով ծածկելով Հայոց երկիրը, թալանչիների քոչվոր ցեղը տիրացավ մեր հողին ու սրբությունների մեծ մասին ու դեռ լկտիաբար հայտարարեց, թե «հակառակորդից մաքրում է օսմանի հողը»:

Չլիներ ջարդը, հայոց շեն քաղաքների ու գյուղերի կործանումը, մենք ցաք ու ցրիվ չէինք լինի աշխարհով մեկ ու մեր մեջ չէր նստի տեղացի ու արտասահմանցի, արևելահայ ու արևմտահայ լինելու, իրարից տարբերվելու ախտը: Օտարներից է գալիս դա, նրանք են մեր արյան մեջ ներարկել: Մեր թշնամին կուզեր այդպիսին տեսնել մեզ: Իսկ մենք հիշողություն ունենք: Չլիներ Եղեռնը ու Հայոց լեռնաշխարհում շարունակեր իր խաղաղ կյանքը մեր ժողովուրդը, հիմա տասնյակ միլիոնանոց երկիր կունենայինք, եղածի բազմակին՝ մշակութային, գիտական ու տնտեսական ներուժով ու ստեղծած արժեքներով: Ու որքան հեռանում ենք մենք 1915-ից, այնքան ավելի խորը ն է դառնում կորստի ցավը, այնքան ավելի բուռն ու հաստատ՝ պատմության սըխալն ուղղելու, Հայոց հզորությունը վերածնելու նրա վճռականությունը:

Մենք հիշողություն ունենք... Ոչ ոք, ոչ մեր ոխերիմ թշնամիները, ոչ արևմտյան ժամանակակից «բարերարները» և ոչ էլ մեր ներքին ոչ հեռատես առանձին քաղաքագետներ (ցավոք, այդպիսիք էլ կան) չեն կարող ժողովրդին զրկել նրա հիշողությունից, քանզի այն մեր ամենամեծ գանձն է, մեզ ակունքներին կապող արմատը: Զարմանալի չէ, որ այդ արմատներից ուզում են կտրել նրանք, ովքեր չունեն արմատներ, ովքեր չունեն հիշողություն:

Հույն գրող և հասարակական գործիչ Միցոս Ալեքսանդրոպուլոսը իր «Հայերը» գրքում, խոսելով հայ խաչքարերի մասին, գրել է.

«7-րդ դարի այս զարմանահրաշ մատուռը պիտի պահպանի ոչ այլ ոք, քան ինքը: Մյուսները շատ-շատ պիտի անցնեն այստեղից ու տեսնեն: Հայը իր անցյալը նույնիսկ մեկ որպե մոռանալու հնարավորություն չունի»:

Մենք ոչինչ չենք մոռանում, մենք հիշողություն ունե՛նք...

Տարեգրություն

1965

— Ապրիլ ամսին, Մեծ եղեռնի 50-ամյակի նախօրեին Ֆրանսիայի Ազգային ժողովի ձախ թևի մի խումբ պատգամավորներ հանդես եկան հայերի 1915 թվականի ցեղասպանությունը դատապարտելու առաջարկությամբ:

1968

— Խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսը 64 երկրների և 16 միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ նշեց հայերի ցեղասպանության մասին:

1973

— ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանում քննարկվեց և միաձայն ընդունվեց Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուհաշիանկիկոյի՝ ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու հարցին նվիրված նախնական զեկուցումը, որի 30-րդ ենթակետում օսմանյան կայսրությունում հայերի ջարդը որակվում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Նավասարդյան

Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ,

Ա՛լ վերածնե փլատակներեն և փառագոչ
Քնարըդ ա՜ռ:

Հանո՛ւն Ուժին, հանո՛ւն Գեղին մտիր մեհյանն
Աստվածներուն.

Ջահը ձեռքիդ՝ բագնե բագին համասփռե՛
Հուր ու արյուն:

Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակդ նուռ,

Հետո զոհվող քերթողներուն սրտին վրա
Լեցո՛ւր, լեցո՛ւր,

Չի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ծեղիդ
Մարմարեն կույս,

Մե՛նք, Զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալույս:



1915 թվականի ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը հայ քաղաքական, կրոնական և մտավորական զանգվածների ներկայացուցիչները, թվով 250 մարդ, ձերբակալվեցին Կոստանդնուպոլսում, տեղահանվեցին դեպի Անատոլիայի խորքերը և մահվան դատապարտվեցին:

Սկիզբ դրվեց հայոց Մեծ եղեռնին: Արդեն մայիս ամսին սկսվեցին օսմանյան Թուրքիայի տարածքում բնակվող հայ բնակչության զանգվածային տեղահանությունները դեպի վերաբնակեցման կենտրոնները՝ Սիրիայի և Միջագետքի ամայի անապատները: Օսմանյան բանակում ծառայող հայերին զինաթափեցին, կենտրոնացրին աշխատանքային զորամասերում և խումբ-խումբ ոչնչացրին: Արևմտահայությունը, փաստորեն, արտաքսվեց իր հազարամյա բնօրրանից: Տեղահանվող քարավաններից, որպես կանոն, առանձնացվում էին հասուն տղամարդիկ և պատանիները ու գաղտնի ենթարկվում մահապատժի: Անասելի տառապանքներ բաժին հասան տարեցներին, կանանց և երեխաներին, որոնք ամիսներ շարունակ քշվելով սարերով ու անապատներով, մշտապես ենթարկվում էին տանջանքների ու անարգանքների:

Զրկված լինելով հացից ու ջրից, նրանք հարյուր-հազարներով մահացան անապատներում:

Փաստորեն, մի փոքրաթիվ ժողովրդի մի հսկայական զանգվածը ոչնչացվեց: Ողջ մնացած փախստականները ցրվեցին արաբական երկրներում, Անդրկովկասում, Եվրոպայում և Ամերիկայում:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ընկած մի մեծ ժամանակահատվածում, մինչև 1965 թվականը, գնալով խամրեց հայերի ողբերգության հիշողությունը, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի սարսափներից ու ավերածություններից հետո:

Հայոց ցեղասպանությունը դարձավ «մոռացված ցեղասպանություն»: 1965 թ. պոռթկաց աշխարհով մեկ ցրված հայերի անօգնական լությունը, որը համայն մարդկության ուշադրությունը փորձեց բևեռել դեպի իր ցավը:

Փողոցներ ու հրապարակներ դուրս թափված հայերի նոր սերնդի ճիչը ապտակի նման շաչեց հայոց ցեղասպանության հերքումն իրականացնող ուժերի դեմքին:

Թուրքական քարոզչության մեքենան իր շուրջը համախմբեց կաշառակեր օտարերկրացի բազմաթիվ գիտնականների ու հրապարակախոսների, որոնք փորձեցին «մոռացված ցեղասպանությունը» դարձնել «վիճելի ցեղասպանություն» և ընդհանրապես հերքել ու ժխտել հայ ժողովրդի դեմ իրագործված ոճրագործության իրողության փաստը: Կարծես թե անհնար է դառնում զանազանել ճշմարտությունը կեղծիքից: Հայերի ցեղասպանությունը հավերժ մոռացության տալու քարոզչությունը սակայն հաջողություն չունեցավ:

Հանցավոր լությունը խախտվեց:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՌԵԼՅԱԱՅՆ ՇՐՋԱՆՑԵԼ ՉԵՆ ԿԱՐՈՂ

1965 թ. հայոց ցեղասպանության հիսնամյա տարելիցի լայնամասշտաբ նշելը սփյուռքահայ համայնքներում և հայրենիքում խթան հանդիսացավ հետագա տարիներին 20-րդ դարի առաջին ցեղասպանության դատապարտման ու նրա պաշտոնական ճանաչման համար աշխարհի առաջավոր ուժերի համախմբման գործում:

Լավրենտի ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն

Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը

Առաջին հզոր ձայնը, որը հիշեցրեց հայերի ցեղասպանության մասին, հնչեց 1968 թվականին, 64 երկրների և 16 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսում:

Սակայն այս հարցում կարևորագույն նշանակություն ուներ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) վերաբերմունքը:

Դեռևս 1973 թվականին, երբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության և պաշտպանության ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանում քննարկվում էր ցեղասպանությունները կանխելու և դրա համար պատժելու հարցին նվիրված նախնական զեկուցումը, ներկայացված բանաձևի 30-րդ ենթակետը օսմանյան կայսրությունում հայերի ջարդը որակվորում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

Այդ զեկուցումը, որով հանդես եկավ Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուհաշիանկիկոն, միաձայն ընդունվեց ենթահանձնախմբի քննարկման ժամանակ, 1974 թ. կրկին ներկայացվեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանին: Թուրքիայի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչները պահանջեցին՝ հանել բանաձևի 30-րդ ենթակետը: Զեկուցումը վերադարձվեց վերամշակման: 1978 թվականին ՄԱԿ-ի ենթահանձնախումբը նորից անդրադառնալով դեռևս 1973 թվականին 30-րդ նստաշրջանին ներկայացված բանաձևի նախագծին, ամբողջությամբ զեկուցումից հանեց ցեղասպանության մասին արձանագրված պատմական մասը, որտեղ հիշատակվում էր նաև հայերի ցեղասպանությունը: Մեկ տարի անց՝ 1979 թվականին նույն բանաձևը ներկայացվեց ՄԱԿ-ի հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի քննարկմանը:

Զայների մեծամասնությամբ որոշվեց վերականգնել 30-րդ ենթակետը: ՄԱԿ-ը վեց տարի անց, արդեն վերջին անգամ կրկին հիշեց հայոց ցեղասպանությունը, երբ 1985 թվականի հուլիսի 2-ին իր հանձնաժողովի 38-րդ նստաշրջանում ընդունած բանաձևի 24-րդ ենթակետում «1915—1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակեց որպես ցեղասպանության օրինակ:

1984 թ. ապրիլի 13—16-ը Փարիզում տեղի ունեցավ ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը, որը քննարկեց հայերի ցեղասպանության հարցը: Ընդունվեց հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում, որտեղ ասվում էր՝

ա. հայ ազգաբնակչությունը հանդիսացել է ու հանդիսանում է մի մեծ ժողովուրդ, որի անհատական, այնպես էլ հավաքական հիմնական իրավունքները միջազգային իրավունքի հիման վրա պարտավոր էին և պարտավոր են հարգել.

բ. հայ ազգաբնակչության բնաջնջումը՝ տեղահանությամբ ու ջարդով, 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ցեղասպանության ոճիրի կանխարգելման ու պատժելիության Համաձայնագրի համապատասխան կազմում է անժամանցելի մի ոճիր...

գ. երիտթուրքերի կառավարությունը հանցավոր է որպես այս ցեղասպանության հեղինակի, որը վերաբերում է 1915—1917 թվականներին կատարված արարքներին.

դ. հայկական ցեղասպանությունը նաև մի «միջազգային ոճիր» է, և թուրքական պետությունը պարտավոր է ստանձնել նրա պատասխանատվությունը, առանց փորձելու պատրվակներ ներկայացնել իր գոյության ընթացքում տեղի ունեցած որևէ ընդհարման համար, այդ պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

ե. այս պատասխանատվությունից հետևում է գլխավոր պարտավորությունը՝ պաշտոնապես ճանաչել այս ցեղասպանության իրողությունը, դրանով իսկ նաև հայ ժողովրդի կրած վնասները.

զ. Միացյալ ազգերի կազմակերպությունը և նրա անդամներից յուրաքանչյուրը իրավասու են պահանջել այս ճանաչումը և հայ ժողովրդին օժանդակել այս նպատակի համար:

Դեռևս 1963 թվականին Եվրախորհրդարանի քաղաքական հանձնաժողովը որոշում ընդունեց՝ Հայկական հարցի քաղաքական լուծման մասին և այն ներկայացրեց Եվրախորհրդարանի քննարկմանը: Միայն չորս տարի անց, Եվրախորհրդարանը անդրադարձավ այդ հարցին և 1987 թվականի հունիսի 18-ին ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» հետևյալ բանաձևը.

«Եվրոպական խորհրդարանը նկատի ունենալով՝

— Սոցիալիստների խմբի անունից պր. Սաբիի և մյուսների ներկայացրած առաջարկությունը՝ Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստաթուղթ 2—737/84 թ.),

— Պր. Կոլոկոտրոնիսի ներկայացրած առաջարկությունը՝ հայկական հարցի և ապրիլի 24-ը հայկական ցեղասպանության հիշատակի օր հայտարարելու մասին (փաստ. 2—360/85 թ.):

Եվրոպական պառլամենտի քաղաքական հանձնաժողովի զեկուցագիրը (փաստ. 2—33/87 թ.):

Ա) հաշվի առնելով՝

— Պր. Ժակեի և նրա համախոհների ներկայացրած առաջարկությունը հայ ժողովրդի կացության մասին (փաստ. 1—782/81 թ.),

— Սոցիալիստների խմբի անունից տիկ. Դյուպորի և պրն. Գլինի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստ. 1—735/83 թ.),

— Տիկ. Դյուպորի գրավոր հարցումը Հայկական հարցի մասին.

— Եվրոպական խորհրդի մշակույթի գործերի մինիստրների խորհրդակցության 1986 թ. նոյեմբերի 13-ին ընդունած որոշումը, որը վերաբերվում է եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանությանը՝ ներառյալ ԵՏՀ (Եվրոպական տնտեսական համագործակցության) երկրների տարածքից դուրս գտնվող հուշարձանները.

Բ) Համոզմունք հայտնելով, որ Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի պատմության ճանաչումն իսկ ենթադրում է նրա ճանաչումը որպես ինքնատիպ էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնություն.

Գ) Նկատի ունենալով, որ հայերը այդ իրադարձությունները (1915 թ. կոտորածները) համաձայն ՄԱԿ-ի 1948 թվականի կոնվենցիայի, որակում են որպես կազմակերպված ցեղասպանություն.

Դ) Նկատի ունենալով, որ թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը, որպես անհիմն.

Ե) Հաստատելով, որ թուրքական կառավարությունը, մերժելով մինչև օրս ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը, շարունակում է այդպիսով զրկել հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից.

1. Այն կարծիքն է հայտնում, որ Հայկական հարցը, ինչպես նաև Թուրքիայի ազգային փոքրամասնությունների հարցը պետք է քննարկվեն Թուրքիայի և Եվրոպական տնտեսական համագործակցության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում. ընդգծում է, որ ժողովրդավարությունը կարող է արմատապես հաստատվել երկրում (Թուրքիայում) այն պայմանով միայն, եթե այդ երկիրը ճանաչի և հարստացնի իր պատմությունը իր էթնիկական և մշակութային այլազանությամբ:

2. Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որտեղի ունեցան 1915—1917 թթ. օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի:

3. Պահանջում է՝ (եվրոպական) խորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915—1917 թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև:

4. Ելնում է նրանից, որ հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության գործադրած ցեղասպանության ներկայիս ճանաչումից հրաժարումը թուրքական կառավարության կողմից, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարումը, Կիպրոսում թուրքական օկուպացիոն զորքերի պահպանումը, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը, այդ երկրում (Թուրքիայում) իս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց ցեղասպանությունը

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կական պառլամենտական դեմոկրատիայի բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը՝ այս ամենը հանդիսանում են անհաղթահարելի արգելքներ Եվրոպական տնտեսական համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

5. Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը, երաշխավորելու իր իրավունքները որպես փոքրամասնություն և անարգել օգտվելու մարդու և քաղաքացիների իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում:

6. Վճռականորեն պահանջում է, որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք, նաև հանդես է գալիս պատմական հուշարձանների պահպանության գործի բարելավմամ, այդ թվում նաև՝ թուրքահայերի կրոնական-ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին և ցանկություն է հայտնում, որպեսզի Եվրոպական տնտեսական համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակին օժանդակող հնարավոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

7. Այս կապակցությամբ կոչ է անում Թուրքիային՝ անշեղորեն պահպանել իր երկրում ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923 թ. Լոզանի պայմանագրի 37—45-րդ հոդվածները, ստորագրված եվրոպական տնտեսական համագործակցության անդամ պետությունների մեծամասնության կողմից:

8. Համարում է, որ հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև թուրքահայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես ժամանակակից Թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքակրթությունների՝ մասնավորապես օսմանյան կայսրության մաս կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

9. Կոչ է անում, այսպիսով, Եվրոպական տնտեսական համագործակցությանը՝ տարածել Թուրքիայի հետ համագործակցության համաձայնությունը նաև մշակութային ասպարեզի՝ այդ երկրում քրիստոնեական կամ այլ, ինչպես, օրինակ, դասական անտիկ շրջանի, խեթական, օսմանյան և այլ քաղաքակրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

10. Իր մտահոգությունն է հայտնում այն դժվարությունների առթիվ, որոնց առնչվում է Իրանի հայ համայնքը մայրենի լեզվի գործածության և կրոնական կանոններին համապատասխան կրթության գործը կազմակերպելու հարցերում:

11. Հանդես է գալիս ընդդեմ Սովետական Միությունում հայ ազգաբնակչության անհատական ազատությունների խախտումների:

12. Վճռականորեն դատապարտում է առանձին կազմակերպությունների կողմից ի գործ դրվող բոլոր բռնի գործողություններն ու ահաբեկչական ձևերը, որոնք հատկանշական չեն հայ ժողովրդի համար, և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

13. Կոչ է անում Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ երկրներին՝ հիշեցնելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես, այն ոճրագործությունների, որոնց զոհ գնացին հայերն ու հրեաները:

Վավերացնում է իր պարտավորությունը՝ իրայես նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացման նպատակը հետապնդող նախաձեռնություններին:

14. Հանձնարարում է իր նախագահին՝ սույն բանաձևը փոխանցելու Եվրոպական պառլամենտի քաղաքական հանձնաժողովին, Եվրոպական խորհրդին, Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ-երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությանը, «ԵՏՀ—ԹՈՒՐՔԻԱ» ընկերակցության խորհրդին, ինչպես նաև թուրքական, իրանական և սովետական կառավարություններին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Թուրքիան փաստորեն, ելնելով այն իրողությունից, որ ինչպես Եվրոպական խորհրդարանը, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպությունը, իրավաբանական տեսանկյունից սանկցիաների կիրառման իրավունքներով օժտված չեն, ընդհանրապես հրաժարվեց բանաձևի գոյության փաստն ընդունելուց:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃՆԱՇՈՒՄԸ ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Սփյուռքում հայկական համայնքների ակտիվ գործունեության և տարբեր երկրներում սոցիալական-քաղաքական կյանքում հայերի դերի բարձրացման շնորհիվ մի շարք պետություններ ընդառաջ գնացին համայնքների առաջարկություններին՝ հատուկ քննարկման ենթարկել հայոց ցեղասպանության ճանաչման և ապրիլի 24-ը հայերի հետ միասնականության օր սահմանելու հարցը:

Դեռևս 1965 թ. Մեծ եղեռնի 50-ամյակի նաստեին, Ֆրանսիայի Ազգային ժողովի ձախ թևի պատգամավորները (հիմնականում կոմունիստները) հարցապնդումով դիմեցին կառավարությանը՝ պահանջելով միջազգային չափանիշներով դատապարտել 1915-ի ցեղասպանությունը, այն համարելով որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն և փոխհատուցումը տալ հայերին: 1985 թ. դեկտեմբերին Ֆրանսիայի Ազգային ժողովի փոխնախագահ Գի Դյուկոլոնեն 35 պատգամավորների անունից հանդես եկավ գրավոր առաջարկով, պահանջելով ընդունել օրենք և ճանաչել «ցեղասպանությունը, որի զոհը դարձավ հայ ժողովուրդը 1915-ին»:

Ազգային ժողով ներկայացված այդ օրինագծում մասնավորապես ասված էր. «Իր անկումն ապրող օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը 1915—1922 թթ. զոհ դարձավ նոր ժամանակների առաջին ցեղասպանությանը: 1915-ին թուրքական կառավարությունը կազմակերպեց հայ ժողովրդի բռնագաղթը, քանի որ այդ ժողովրդի ազգային գիտակցությունը դեմ էր առնում բարձրացող թուրքական ազգայնականությանը: Հայկական աղբյուրների համաձայն, մեկնկես միլիոն հայեր սպանվեցին կամ անհետացան աքսորի ճանապարհին, կամ տեղահանության վայրերում...: Պատգամավորները միշտ էլ հանդես են եկել հայերի ցեղասպանության ճանաչման օգտին: Ճանաչել այն, նշանակում է գործնականորեն հանդես գալ այն բանի օգտին, որ այդ հանցագործությունը հիշվի ու դաս ծառայի՝ խանգարելով նրա կրկնությանը»:

Օրինագիծը ուղարկվեց Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական, օրենսդիր ու վարչական օրենքների հանձնաժողով, որը հարցին համապատասխան ընթացք չտվեց:

1985 թվականի դեկտեմբերին Ֆրանսիայում ստեղծվեց «Հայերի ցեղասպանության ճանաչման ֆրանսիական կոմիտեն», հասարակական մի կազմակերպություն, որի կազմում ընդգրկվեցին նացիզմի ու ֆաշիզմի դեմ պայքարած, մահվան ճամբարներն անցած նախկին դիմադրականները, գաղութային պատերազմների դեմ հանդես եկած մարտիկներն ու խաղաղության պաշտպանները:

1986-ի ապրիլին Ազգային ժողովում կրկին բարձրացվեց այդ հարցը, որը պահանջում էր ընդունել օրենք հետևյալ ձևակերպմամբ. «Ֆրանսիական Հանրապետությունը, ճանաչելով ցեղասպանությունը, որին 1915-ին օսմանյան կառավարության կողմից զոհ դարձավ հայ ժողովուրդը, հանձն է առնում ապահովել այդ տարեթվի ամենամյա նշումը ազգային չափանիշով և աշխատել միջազգային հասարակայնությանը ճանաչել տալ մարդկության դեմ ուղղված այս հանցագործությունը»: Հարցադրման դեմ հանդես եկավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Բեռնար Ռեմոնը, որով ընթացք չտրվեց պատգամավորների պահանջին:

1980 թ. Կանադայի Քվեբեկի նահանգի Ազգային համագումարը և Օնտարիո նահանգի խորհրդարանը որոշում կայացրեցին հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին և դիմեցին Կանադայի խորհրդարանին՝ պաշտպանել այն: Առաջարկը պաշտպանություն չգտավ:

1985 թվականի ապրիլի 23-ին Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց՝ հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին: Հանձնարարվեց Արգենտինայի արտաքին գործերի նախարարությանը՝ վարել հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանը նպաստող քաղաքականություն:

1985 թվականի ապրիլի 23-ին հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշում ընդունեց նաև Ուրուգվայի Ազգային համագումարը:

1988 թվականի նոյեմբերի 22-ին Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին»: Դատապարտելով հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ընդունված օրենքը ապրիլի 24-ը հայտարարեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Առաջարկությունն ներկայացվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին:

1990 թվականի ապրիլի 19-ին Կիպրոսի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետական դուման ընդունեց հայտարարություն՝ «1915—1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին», որտեղ ասվում է՝

«Հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտահայաստանի տարածքում 1915—1922 թթ. հայերի բնաջնջման մասին,

— հետևելով ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած միջազգային պայմանագրի դրդումն ու տարին,

— պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետի մասին 1968 թ. նոյեմբերի 26-ի միջազգագրին,

— ձգտելով վերջնել ռուսական պետության մարդասիրական ավանդույթները, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915 թվականին հայ ժողովրդի հանդեպ թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»,

— նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով,

— Ռուսաստանի Դաշնության Պետական Դումն դատապարտում է 1915—1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին,

— իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

1996 թվականի ապրիլի 23-ին Կանադայի համայնքների պալատը Ժիլբեր Պարենի նախագահությամբ քննարկեց «Մարդու կողմից իր մերձավորին ցույց տրվող անմարդկային վերաբերմունքի մասին» հարցը: Մի խումբ պատգամավորներ առաջարկություն էին ներկայացրել հայերի 1915 թ. ցեղասպանության 81-րդ տարեդարձի կապակցությամբ սահմանել և յուրաքանչյուր տարի ապրիլի 20-ից 27-ը նշել մարդու կողմից իր մերձավորի նկատմամբ թույլ տրված հանցագործության հիշողության շաբաթ:

Առաջարկությամբ հանդես եկավ պատգամավոր Միշել Դավիոլը, որին ջերմորեն պաշտպանեցին պատգամավորներ Սարգիս Ասատրյանը, Էլենի Բակոպանոսը, Էդի Ֆրայը, Ռեալ Մենարը, Բոբ Միլլսը, Ֆիլիպ Գարեն, թվով քսանչորս մարդ:

Ընդունված որոշմանը կողմ քվեարկեց 129, դեմ՝ 93 և ձեռնպահ՝ 8 պատգամավոր:

Կանադայի համայնքների պալատը ընդունեց հետևյալ բանաձևը. «Հայկական ողբերգության 81-րդ տարելիցի կապակցությամբ, որը տեղի էր ունեցել 1915 թվականի ապրիլի 24-ին և խլեց մեկնկես միլիոն կյանքեր, պալատը ճանաչում է մարդկության դեմ կատարված այդ հանցագործությունը և յուրաքանչյուր տարվա ապրիլի 20—24-ը հայտարարում է մարդկանց կողմից մեկը մյուսի նկատմամբ գործադրած դաժանության հիշողության շաբաթ»:

1996 թվականի ապրիլի 25-ին Հունաստանի խորհրդարանը Ապոստոլոս Կակլամանիսի նախագահությամբ օրենք ընդունեց Ապրիլի 24-ը որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշողության օր սահմանելու մասին:

Դեռևս 1994 թվականի հոկտեմբերի 4-ին Հունաստանի խորհրդարանի «Քաղաքական գարուն» խմբակցությունը խորհրդարանի քննարկմանն էր ներկայացրել ապրիլի 24-ը թուրքական վարչակարգի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին օրենքի նախագիծ, որին սակայն ընթացք չտրվեց: 1994 թ. նոյեմբերի 22-ին նույն խմբակցությունը դարձյալ առաջարկություն ներկայացրեց, որը ջերմ պաշտպանություն գտավ խորհրդարանական հանձնաժողովի և Հունաստանի բոլոր կուսակցությունների կողմից, բացառությամբ կոմունիստական կուսակցության ներկայացուցչի:

Սակայն այդ առաջարկության դեմ հանդես եկավ Հունաստանի արտաքին գործերի նախարարությունը՝ վախենալով, որ կխախտվեն Անկարայի հետ փխրուն հավասարակշռությունն ու հարաբերությունները: Առաջարկության քննարկումն այդպիսով հետաձգվեց շուրջ երկու տարի:

1996 թ. ապրիլին խորհրդարանին կրկին դիմեց «Քաղաքական գարուն» խմբակցությունը, որին միացավ նաև հունահայ երիտասարդական միությունը:

1996 թ. ապրիլի 25-ին հրավիրված խորհրդարանական նիստի օրակարգում հաստատվեց «Ապրիլի 24-ը որպես թուրքերի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին» հարցը:

Խորհրդարանի նիստին մասնակցում էին Կիլիկիա քաղաքի երկրորդ գիմնազիայի 65 հայ աշակերտներ, իրենց հինգ ուսուցիչների հետ միասին: Քննարկմանը մասնակցեց տասնութ պատգամավոր:

Արժանահիշատակ է պատգամավոր, «Քաղաքական գարունի» ներկայացուցիչ Ստեֆանոս Ստեֆանոպուլոսի ելույթը խորհրդարանում: Դիմելով պատգամավորներին, նա ասել էր. «Դժբախտ հրեա ժողովուրդը գոնե տեսավ կանգնեցրեց Վիլլի Բրանդտին՝ ծնրադրած համակենտրոնացման մի ճամբարում, կարծեմ Աուշվիցում, հրապարակավ ներողություն խնդրելիս համաշխարհային հասարակությունից, մարդկությունից: Կա՞ որևէ մեկը, ոչ միայն այստեղ, ամբողջ աշխարհում, որ հավատա, թե Դեմիրելը կամ որևէ մեկ ուրիշ թուրք նախագահ կամ վարչապետ այդ նույն պատճառով երբևէ պիտի ծնրադրի Եփրատի ափին, Էրզրումի կիրճերում, Խարբերդի ձորերում և ներողություն պիտի խնդրի մարդկությունից՝ մեկուկես միլիոն հայերի ջարդի համար, երբ, մանավանդ, Թուրքիան ազգայնական, շովինիստական իր մի զառանցանքի մեջ, ենթագիտելով պատմությունը և ծաղրելով իր իսկ զոհերին, հուշարձան ստեղծեց հայերի կողմից մորթված թուրքերի հիշատակին»:

Ներկայացված օրինագիծը ջերմորեն պաշտպանվեց «Նոր ժողովրդավարություն» խմբակցության ներկայացուցիչ Անաստասիոս Ներանձիսի կողմից: Այնուհետև խորհրդարանում հնչեցին պատգամավորներ Նիկիտաս Ակրիստիդիսի, Կոնստանդինոս Տրիարիդիսի, Գրիգորիս Նիոտիսի, Դիմիտրիոս Վունացոսի, Կոնստանդինոս Բանտուվասի և այլոց հիմնավոր խոսքերը, որոնք ուղեկցվում էին բազմաթիվ սկզբնաղբյուրների և հայոց ցեղասպանության ականատեսների վկայությունների հրապարակմամբ:

Ձայների մեծամասնությամբ Հունաստանի խորհրդարանը ընդունեց որոշում, որտեղ ասվում էր. «Հոդված առաջին— Ապրիլի 24-ը սահմանվում է Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշողության օր: Հոդված երկրորդ— Հիշողության միջոցառումների բնույթը, բովանդակությունը, առաջ մղող անձը և կազմակերպման ձևը սահմանվում է նախագահական հրամանագրով՝ ներքին գործերի, պետական կառավարման ու ապակենտրոնացման նախարարի առաջարկությամբ՝ հաշվի առնելով ճանաչված հայկական միությունների և կազմակերպությունների կարծիքը: Հոդված երրորդ— Ներկա օրենքը ուժի մեջ է մտնում կառավարության թերթում այն հրապարակելուց հետո»:

1997 թ. ապրիլի 17-ին Նոր Հարավային Ուելսի (Ավստրալիայի) խորհրդարանի օրենսդիր հավաքումը որոշում կայացրեց ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության հիշատակի օր սահմանելու մասին և առաջարկություն ներկայացվեց Ավստրալիայի դաշնային կառավարությանը՝ ընդունել նույնանման որոշում: Խորհրդարան ներկայացված նախագծի հեղինակը ընդդիմության ղեկավար Քոլլինզն էր, որի առաջարկությունը քննարկման ժամանակ իր պաշտպանությունը գտավ վարչապետ Կարրի, պատգամավորներ Ֆոտիոսի, Ուոտկինսի կողմից: Միահամուռ հավանության արժանացած առաջարկությունը անառարկելիորեն ընդունվեց խորհրդարանի կողմից:

Նոր Հարավային Ուելսի պառլամենտը ելնելով այն բանից, որ 1997 թվականի ապրիլի 24-ին նշվելու է թուրքական կառավարության կողմից 1915—1922 թթ. իրականացված հայերի ցեղասպանության ութսուներկուերորդ տարին, որոշեց՝

«ա. միավորել Նոր Հարավային Ուելսի հայկական համայնքի անդամներին, 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած մեկնկես միլիոն տղամարդկանց, կանանց և երեխաների հիշատակը հարգելու համար.

բ. դատապարտել հայերի ցեղասպանությունը և դրան հաջորդած մեր դարաշրջանում տեղի ունեցած ցեղասպանությունների մյուս բոլոր դեպքերը, որպես ռասայական, մշակութային և կրոնական անհանդուրժողականության առավելագույն ակտեր.

գ. անհրաժեշտ ճանաչել այն, որ պետք է գիտենալ և հիշել մարդկային պատմության սև ժամանակները, վերստահ լինելու համար մարդկության դեմ նման հանցագործությունները կրկնելու անթույլատրելիության մեջ:

դ. դատապարտել և կանխարգելակել բոլոր այն փորձերը, որոնք ժխտում են և խեղաթյուրում այս դարում իրականացված հայերի ցեղասպանության ճշմարտացի լինելու փաստը.

ե. ապրիլի 24-ը ողջ Նոր Հարավային Ուելսում համարել 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած մեկնկես միլիոն հայերի հիշատակի օր.

զ. դիմել Դաշնության կառավարությանը հայերի ցեղասպանությունը պաշտոնապես դատապարտելու կոչով, ինչպես նաև կանխել մարդկության դեմ նման հանցագործությունների ժխտման յուրաքանչյուր փորձ»:

1997 թվականի մայիսի 3-ին Լիբանանի Հանրապետության խորհրդարանը բանաձև ընդունեց ապրիլի 24-ը հայության հետ միասնականության օր հռչակելու մասին: Բանաձևում ասվում է.

«Լիբանանի խորհրդարանը՝

— Զգալով 1915—1923 թթ. երկար տարիների ընթացքում լիբանանցի հայ ժողովրդի ապրած տառապանքի ու ցավի չափը, որ նման էր լիբանանցի և շրջանի այլ ժողովուրդների տառապանքներին, որոնք մինչև օրս շարունակվում են այս դարասկզբին մեր ժողովուրդների դեմ գաղութատիրոջ կողմից սկսած ցեղասպանությունը,

— Նկատի ունենալով, որ ամեն տարվա ապրիլի 24-ը առիթ է ոգեկոչելու հայ ժողովրդի դեմ կատարված ջարդերի արհավիրքի հիշատակը, Լիբանանի խորհրդարանը սրանով կոչ է անում լիբանանցի ժողովրդին, որ ամեն տարի այդ օրը հայտարարվի հայ ժողովրդի հետ միասնականության օր»:

Միանգամայն այլ է ԱՄՆ-ի կառավարության վերաբերմունքը: Երկարատև պայքարի ընթացքում, որը շարունակվում է մինչև այսօր, Միացյալ Նահանգների կոնգրեսի ներկայացուցիչների պալատին չհաջողվեց հաղթանակի հասնել:

Դեռևս 1975 թվականին, երբ ողջ հայությունը պատրաստվում էր ապրիլի 24-ին նշել Մեծ եղեռնի վաթսունամյակը, ապրիլի 8-ին ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց (թիվ 148) 1975 թվականի ապրիլի 24-ը «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր» հայտարարելու մասին: Բանաձևը մերժվեց: 1984 թ. ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը ընդունեց բանաձև (թիվ 247) և պահանջեց կառավարությունից 1985 թ. ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»: Այդ նույն տարում ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը կոչ էր անում կառավարությանը՝ արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում հաշվի առնել հայոց եղեռնի հիշողությունը: Բանաձևը քննարկվեց և ընդունվեց Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից, սակայն հետագայում կառավարության ճնշման տակ այն կասեցվեց:

1985 թ. ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 192 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից՝ 1985 թ. ապրիլի 24-ը երկրում հայտարարել որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման օր»: Բանաձևը քննարկվեց, սակայն մերժվեց ձայների մեծամասնությամբ:

Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 102) ներկայացվեց ԱՄՆ-ի Սենատ և նույնպես մերժվեց:

1987 թ. ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից՝ արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում հաշվի առնել հայոց եղեռնի իրականությունը: Սակայն այն մերժվեց: Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 247) ներկայացվեց ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատ և կրկին ձայների մեծամասնությամբ մերժվեց:

1996 թ. մայիսի 15-ին ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նախաձեռնությամբ վերջին քսան տարիների ընթացքում առաջին անգամ Կոնգրեսում տեղի ունեցավ լսումներ՝ օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչման խնդրի շուրջ: Անկասկած այդ խնդրի քննարկումը կարևոր իրադարձություն է ոչ միայն եղեռնի ճանաչման, այլև Հայաստանի և Թուրքիայի ներկայիս հարաբերությունների ձևավորման առումով:

Ամերիկյան կոնգրեսին ներկայացվեց մի բանաձև, որը Թուրքիային կոչ է անում ճանաչել հայոց եղեռնը: Այդ բանաձևը պաշտպանում էին 165 կոնգրեսական, և միջազգային հարաբերությունների հանձնախումբը իր քննարկումների ընթացքում հույսեր էր փայփայում բանաձևի ընդունման խնդրում:

Սակայն ցավով պետք է նշել, որ նույն օրը, երբ Կոնգրեսի դահլիճներից մեկում փորձագետները կարծիք էին հայտնում ցեղասպանության պատմական իրողության շուրջ, պետական դեպարտամենտի խոսնակ Գլեն Դևիսը լրագրողներին հայտնեց, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին գործերի նախարարությունը հավանություն չի տալիս կոնգրեսի կողմից եղեռնը ճանաչելու նախաձեռնությանը, քանի որ այն մի շարք կարևոր հարցերում կխանգարի Թուրքիայի հետ ԱՄՆ-ի համագործակցությանը, ինչպես նաև բացասական ազդեցություն կարող է ունենալ հայ-թուրքական հարաբերությունների հետագա բարելավման վրա:

ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարությունը գտնում էր, որ ԱՄՆ-ը լիովին ըմբռնում է հայ ժողովրդի կրած տառապանքները, բայց կոնգրես ներկայացված բանաձևը համարում է ոչ տեղին և հարմար:

Անհրաժեշտ է նշել, որ ամերիկյան կոնգրեսականները հնարավորություն էին ստեղծել տարբեր կարծիքների լսումների համար: Քննարկումները բացահայտեցին հակասական կարծիքներ ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ:

ԱՄՆ-ում լայն ճանաչում ձեռք բերած պրոֆեսոր Զասթին Մակքարտին, որը հայտնի է որպես թուրքամետ մի անձնավորություն, փորձեց կրկին անգամ հանձնախմբում հանդես գալ Թուրքիայի պաշտպանությամբ, գտնելով, որ օսմանյան պետությունը իր առջև երբեք հայ բնակչությանը բնաջնջելու նպատակ չի դրել: Զասթին Մակքարտիի «հիմնավորումները» ջերմ պաշտպանություն գտավ ընդամենը մեկ կոնգրեսականի՝ Ինդիանա նահանգից հանրապետական Դան Բերթընի կողմից: Նրանք երկուսով պնդում էին, որ ԱՄՆ-ի իշխանությունները չպետք է զբաղվեն հայոց եղեռնի հարցով, այն թողնելով պատմագետների և մասնագետների դատին:

Հանձնախմբի քննարկումներին ակտիվորեն և ճշմարիտ հիմնավորումներով հանդես եկան Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի և Ամերիկայի Հայկական համագումարի ներկայացուցիչները, որոնց հարցադրումները և հայոց ցեղասպանության վերաբերյալ ներկայացված պատմական տվյալները և վկայությունները դրականորեն ընդունվեցին կոնգրեսի արտաքին գործերի հանձնախմբի բոլոր անդամների կողմից, բացառությամբ մեկի՝ կոնգրեսական Դան Բերթընի:

Հանձնախմբի աշխատանքներին որպես փորձագետներ մասնակցող Գլենդելի քոլեջի պրոֆեսոր Լևոն Մարաշլյանը և Հայկական համագումարի հետազոտական հարցերի գծով պատասխանատու դոկտոր Ռուբեն Ադալյանը խստորեն դատապարտեցին հատկապես պատմական իրողությունները ժխտողների բացասական դերը: Փաստորեն, իրողությունը ժխտողները իրականում չեն օգնում Թուրքիային, այլ ընդհակառակը, վնաս են հասցնում թուրք ժողովրդի շահերին:

Այս հանգամանքը եթե ընդունում է ԱՄՆ-ը, ապա նա պետք է Թուրքիային համոզի ու քաջալերի ընդունելու պատմական իրողությունը և դրանով իսկ նպաստի հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը:

Չնայած ԱՄՆ-ի կոնգրեսը օրակարգ չմտցրեց հանձնաժողովի առաջարկությունը, այնուհանդերձ մի բան պարզ էր, որ այն իրենց իսկ կոնգրեսականների կողմից դեռևս համարվում է խիստ հրատապ մի հարց, որից նրանք հրաժարվել չեն ցանկանում:

1997 թ. ապրիլի 8-ին ԱՄՆ-ի կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչը և Դեյվիդ Բանիերը կոնգրեսին ներկայացրեցին օրենսդրական նախագիծ, կոչ անելով կոնգրեսին՝ հատուկ բանաձև ընդունել հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին: Ներկայացված բանաձևում մասնավորապես առաջարկվում է արձանագրել՝

ա. Կոնգրեսը ամերիկահայության հետ հարգում է հայկական ցեղասպանության զոհերի հիշատակը.

բ. ԱՄՆ-ը պետք է Թուրքիային ստիպի, որպեսզի վերջինս կատարի բոլոր պատշաճ քայլերը՝ օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության դեմ 1915—23 թթ. գործադրված բռնությունները ճանաչելու և ոգեկոչելու համար:

1997 թ. ապրիլի 22-ին ԱՄՆ-ի Սենատի հայկական համախմբման դահլիճում նշվեց հայոց Մեծ եղեռնի 82-րդ տարեդարձը, որը կազմակերպել էր սենատոր Ջեկ Ռիդի, կոնգրեսականներ Ջոն Նոլենբերգի, Մարտին Նիհրնի, Դեյվիդ Բանիերի և Ջորջ Ռադանովիչի մասնակցությամբ ստեղծված հանձնախումբը:

Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման պահանջներով վերջին տարիներին հանախ են հանդես գալիս ֆրանսիական և իտալական մի շարք քաղաքների և նահանգների խորհուրդները, որոնց առաջարկությունները սակայն Ֆրանսիայի և Իտալիայի խորհրդարանային հանձնաժողովների քննարկումից այն կողմ չի անցնում: Փաստորեն, խոշոր տերությունների կառավարությունները շարունակում են հավատարիմ մնալ դեռևս դարիս քսանական թվականներին իրենց կողմից որդեգրած քաղաքականությանը, չնայած նրանց համար հայոց ցեղասպանությունը անառարկելի իրողություն է:

Հայի ճակատագիր

ԱՐԹՈՒՐ ԱԴԱՄՈՎ. ԴԺՎԱՐ ԿՅԱՆՔ

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Ֆրանսիայի թատերական գրականության երկնակամարում միանգամից հայտնվեցին ֆրանսիագիր երեք հայազգի հեղինակներ։ Արթուր Ադամովը կովկասահայ էր, էժեն Իոնեսկոն՝ ռումինահայ, Սամուել Պեքեթը՝ իռլանդահայ։ Գրողական հոգեբանությամբ և ոճով միանգամայն տարբեր լինելով, նրանք իրենց ստեղծագործություններում ներկայացնում էին հետպատերազմյան տարիների «տեղահան» եղած մարդուն։

Այս երեքի ստեղծած թատրոնը մի քանի տարվա ընթացքում խորը ակոս թողեց ոչ միայն ֆրանսիական, այլև համաշխարհային թատերագրության զարգացման ընթացքի վրա։

Տարիներ անց, այս երեքից վերջինը՝ Սամուել Պեքեթը, 1969 թվականին պիտի արժանանար Նոբելյան մրցանակի, էժեն Իոնեսկոն 1970-ին պիտի դառնար ֆրանսիական ակադեմիայի անդամ և անմահների շարքում զբաղեցներ իրեն հատկացված աթոռը։ Իսկ Արթուր Ադամովը, երկարատև հիվանդությունից հետո, պիտի ինքնասպան լիներ՝ 1970-ի գարնանամուտին։

Արթուր Ադամովը (Հարություն Ադամյան) Բաքվի հարուստ նավթատերերից մեկի, շուշեցի Սուրեն Ադամյանի և Լոլա Բահաթուրյանի որդին էր։ Հարությունի մորական տատը՝ Եկատերինա Բահաթուրը, մինչխորհրդային շրջանում և հետո Կովկասում մեծ ճանաչում ունեցող թատերագիր էր։

Մանկության տարիների մղձավանջային երկու հուշ ամբողջ կյանքում ուղեկցեցին ապագա թատերագրին։ Առաջինը, երբ փոքրիկ Հարությունը իրենց նորակառույց շքեղ տան աստիճանների վրա և վերելակի մեջ տեսավ աղգամիջյան ընդհարումներից մազապուրծ սարսափահար հայ ապաստանյալներին։ Եվ երկրորդը՝ հոր նկատմամբ դաշնակցական կուսակցության ձեռնարկած մահափորձի սարսափը։ Հայ ապաստանյալների մահասարսուռ տագնապն ու դատապարտվածի անհույս հայացքները, հոր նկատմամբ գործադրված մահափորձի տառապանքը տպավորություններ էին, որոնք պիտի արտահայտվեին նրա թատերգությունների ասելիքի ու փիլիսոփայության մեջ («Մեծ և փոքր փոփոխություններ», «Բոլորն ընդդեմ բոլորի» և այլն)։

Պետք է ընդգծել, որ բազմաթիվ թատերգություններ, իսկ դրանք մի քանի տասնյակի են հասնում, որոշակի աղերսներ ունեն նրա փորձություններով ու տառապանքներով առլեցուն կյանքի ոդիսականի հետ՝ փախուստ, աքսոր, չքավորություն, ճամբարային ճընշող մթնոլորտ։

Ֆրանսիայի մշակույթը, հատկապես գրականությունն ու թատրոնը, շատ բանով են պարտական Արթուր Ադամովին։ Նրա բարձրարժեք թարգմանությունների, գրականագիտական, տեսական ուսումնասիրությունների և՝ ռադիոհաղորդումների միջոցով է, որ ֆրանսիացիները մոտիկից իմացան ու գնահատեցին գերմանական գրականությունից՝ Պուխներին, Քլայստին, Ռիլկեին, Կաֆկային, Ֆրիշին, ռուս գրականությունից՝ Գոգոլին, Դոստոևսկուն, Չեխովին, Գորկուն, Լեսկովին, անգլիական գրականությունից՝ Մաուրին և Կեյին, ամերիկյան գրականությունից՝ Մելուիլին և ուրիշների։ Նրա թատերգություններ բազմիցս մեծ հաջողությամբ բեմադրվել են փարիզյան բեմերում, առաջնակարգ դերասանների մասնակցությամբ։

Ֆրանսիական գրականության ընդհանուր հոլովույթի մեջ անհնար է ըմբռնել Ադամովի արվեստը, եթե չկարևորվի նրա հոգեբանության ատաղձը, որը հունցվել և ձևավորվել է 20-րդ դարի առաջին ցեղասպանության և հետպատերազմյան հեղափոխության օրերին։ Ժամանակին թյուրիմացաբար ընդհանրապես սահմանափակ ու նեղ ապրումներ ու գաղափարներ արտահայտող երկեր համարված նրա ստեղծագործություններն իրենց բովանդակությամբ, արծարծված խնդիրներով այսօր շատ ավելի ընդհանրական ու այժմեական են, քան երբևէ։

Արթուր Ադամովի թատրոնը և գրականությունը միաժամանակ հայ սփյուռքի մշակութային կարևորագույն երևույթներից ու ներդրումներից մեկն է, որը, ցավոք, մինչև օրս մնում է անճանաչ, շընթերցված և մանավանդ՝ չգնահատված։ Մեր հայրենակցի գրական ժառանգության հրատարակությունը, նրա բարձրարժեք ստեղծագործության հասարակական և գեղարվեստական գնահատականը պիտի տա հայ գրականագիտությունը։ Դա պետք է մեր պատմությանն ու մշակույթին, այսօրվա և գալիք սերունդներին։

«ՀԱՌԱՋ»
Փարիզ

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ Է

Վիլյամ Սարոյանը համաշխարհային գրականության բացառիկ երևույթներից է։ Բացառիկ՝ ոչ իր հզոր տաղանդով— բազում են հզոր տաղանդները համաշխարհային գրականության մեջ։

Սարոյանը բացառիկ ու զարմանալի էր բոլորովին այլ իմաստով. լինելով ամերիկյան գրող, նա, իմ խորին համոզմամբ, միաժամանակ հայ ազգային գրող է։ Այդպիսի երևույթ համաշխարհային գրականության մեջ գոնե ինձ ծանոթ չէ։ Կան, իհարկե, շատ գրողներ, որ ճակատագրի բերումով կտրվել են իրենց ժողովրդից ու նրա լեզվից, ըստեղծագործել են այլ միջավայրում, որդեգրել այլ լեզու, բայց մնացել են իբրև սոսկ այդ միջավայրի ու այդ լեզվի գրող։ Սարոյանի բացառիկությունը այն է, որ գերաճելով իր միջավայրից ու իր որդեգրած լեզվից, դարձավ նաև իր հարազատ ժողովրդի ազգային գրողներից մեկը։ Եվ դա ամենից առաջ հենց ինքը Սարոյանն է հասկացել և ձևակերպել շատ սեղմ ու դիպուկ. **«Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ համարում եմ հայ գրող»։**

Ինչո՞ւ, ի՞նչ պատճառաբանությամբ, ինչի՞ վրա հենվելով է, որ նա իր գրական գործունեության հենց սկզբում արել է շատերի համար անհասկանալի ու վիճելի այդ հայտարարությունը։ Չէ՞ որ գրողի այս կամ այն գրականությանը պատկանելը ամենից առաջ որոշում է այն լեզուն, որով նա գրում է։

Բայց տեղնուտեղը Սարոյանը բացատրել ու պատճառաբանել է իր հայտարարությունը։ Այդ պատճառաբանությունը խորն է ու հիմնավոր. **«Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ ընկարագրում եմ, ամերիկյան է, բայց ոգին, որն ինձ մղում է գրելու՝ հայկական է։ Ուրեմն ես հայ գրող եմ և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին»։**

Բայց թող չստացվի այնպես, թե Սարոյանը իր ժողովրդի ոգին ժառանգել էր զուտ իրրև արյան կախարդական հիշողություն, իբրև երջանիկ հետնորդին հասած ձրի պարգև։ Ո՛չ։ Հիշողությունը՝ հիշողություն, բայց այն կարող է խամրել ու բթանալ, եթե չի հարստանում սեփական տառապանքի փորձով, եթե կենսական հյութեր չի ստանում իրականությունից, մթնոլորտից։ Սարոյանի մանկությունը ու պատանեկությունն անցան այնպիսի միջավայրում, որն ի վիճակի էր արյան հիշողությանը գումարել կենսական հարուստ հյութեր ու նաև ծանր կենսափորձ։

Նախ ընտանիքը. դարասկզբին հայրենի Բիթլիսը թողած ու այդ հեռավոր ափերը նետված նահապետական այդ ընտանիքը թարմ ու անխաթար էր պահել հայրենի երկրի վարքն ու բարքը, կենցաղը, ավանդույթները, բառն ու բանը, զրույցները, մի խոսքով՝ ոգին։ Սարոյանի հոգում առանձնապես մեծ հետք է թողել տատը՝ Լուսնթագ Ղարաողլանյանը. «Իմ մեծ մայր,— պատմում էր Սարոյանը,— Ամերիկայի մեջ ալ Բիթլիս կապրեր։ Ան առանձին աստված ուներ, կրոն չէր գիտեր, անոր աստված ուրիշ էր, ան ամենեն շատ մարդու խելքին ու գութին կհավատար ու չէր վճռիր ու չէր հուսահատիր»։

Ծերմակած, պատկառելի Սարոյանը մանկան հիացմունքով ու խանդաղատանքով էր պատմում հոր՝ Արմենակ Սարոյանի մասին.

«Իմ հայր բանաստեղծ էր,— ասում է նա։— Ես անոր չեմ հիշեր, չորս տարու մանչ էի, երբ մեռավ։ Երբ մեծացա ու պատկերին նայեցա՝ բանաստեղծ էր...»։

Բայց ոչ միայն Սարոյանի ընտանիքում էր, որ թարմ ու անխաթար էին հայրենի երկրի բարքն ու վարքը, կենցաղը, ավանդները, բառն ու բանը, հոգեբանությունը։ 1915 թվի Մեծ եղեռնը դաժան մի ալիքով այդ հեռավոր ափերն էր նետել մի հոծ հայություն, որի զգալի մասը ապաստան էր գտել Սարոյանի ծննդավայրում՝ Ֆրեզնո քաղաքում։ Սարոյանի վկայությամբ իր մանկության ու պատանեկության տարիներին Ֆրեզնոն կիսով չափ հայկական քաղաք էր. Բիթլիսի, Վանի, Մշո, Խարբերդի խոսքն ու զրույցն էր ամենուր, փողոցներում, բակերում, սրճարաններում։ «Ջարդեն փախած հայեր պըզտիկ ուրախություններուն վրա անանկ կխնդային, անանկ կըպոռային, որ ամբողջ փողոց, ամբողջ թաղ կբռներ։ Տեղացիներ կզարմանային, կնեղվեին, է՞, մեզի ինչ, մենք կըխնդայինք, կպոռայինք...

Հայ իր բոլոր դժբախտություններու մեջ կատակ կսիրե, կոմիկը կսիրե, որովհետև լավատես է»...

Սարոյանը մանկուց է շըփվել այդ մարդկանց հետ, սիրել է նրանց, հասունանալով խորամուխ է եղել նրանց էության, նրանց կենսափիլիսոփայության մեջ, հայտնաբերել այնտեղ հոգևոր մեծ ու ստույգ արժեքներ, կեցության պարզ, բայց իմաստուն ու կայուն օրենքներ և ժառանգել դրանք։

Տարիների հետ հոգեկան այդ ժառանգությանը նա գումարել է մի այլ մեծ արժեք՝ մարդկային քաղաքակրթության ստեղծած հարստությունը։ Նա աշխարհի ամբողջ հին ու նոր քաղաքակրթությունը ներծծած ու մարսած բարձրագույն մտավորական էր, իր ժամանակի արվեստի ու գրականության շատ ու շատ մեծերի հետ սեղան նստած, մտքեր փոխանակած, հաճախ նաև բուռն վեճերի մեջ մտած մտավորական։ Եվ ահա այդ երկուսի՝ մեր ազգային ոգու, ոճի, հոգեբանության, ավանդների և միջազգային գեղարվեստական մտածողության համալուծվածքից ծնունդ է առել վիթխարի մի երևույթ, որ մեկ բառով սարոյանական է կոչվում։ Եվ պատահական չէ, որ Սարոյանը այն քիչ գրողների թվին է պատկանում, որոնք մի առավոտ արթնանում են նշանավոր դարձած։

Թուրքական անընդմեջ հալածանքներից ու ջարդերից փախած և օտար հողում ապաստան գտած հայ տարագիր ծնողների զավակը երևի ամբողջ խորությամբ հասկացավ, թե ժողովուրդներին ինչ է բերում կույր ֆանատիզմը, ինչ է բերում իրեն ուրիշից գերադասելու կույր մոլորությունը, ֆաշիզմի ջախջախումով երևի առավել ամրապնդեց իր այն հավատը, որ «սերը անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան»։

Քայլելով աշխարհի, իր խոսքերով ասած «չարության ու ագահության, ատելության ու սարսափի, արատավորության ու նեխվածության» միջով, նա երևի սկսեց ավելի ու ավելի խոր զգալ իր ակունքների կարոտը։ Նախ կրկին այցելեց Սովետական Հայաստան, ապա գնաց Բիթլիս, իր ծնողների ու նախնիների բնօրրանը։

Հուզմունքով էր պատմում այդ մասին. «Քաղաք ավերակ էր, միայն բերդ կանգուն էր։

Քուրդ մը կար, ութսունն անց, հորս հիշեց, ճանչցավ։ Ան էր, որ ինձի մեր տան տեղ ցուցուց։

Տուն ավերակ էր, բայց օջախ կար...

Հետս մարդիկ կային, քուրդեր, թուրքեր, ըսի՝ դուք գացեք, կուզեմ մենակ մնալ»։

Ու մենակ է մնացել հայրենի տան ավերակների մեջ։ Ինչքա՞ն է մնացել, ի՞նչ է խորհել, ի՞նչ է զգացել...

Ինչ իմանաս...

Հայրենի ավերակված տունը...

Այդ տան քարե պատերի մեջ դարեր շարունակ ապրած խղճի, բանականության, առաքինության, կեցության պարզ ու բարդ փիլիսոփայության ժառանգորդն էր նա։ Ու թեև ավերակ էր տունը, բայց այդ տան մեջ ապրած կեցության պարզ ու բարդ փիլիսոփայությունը, տեղափոխվելով Սարոյանի պատմվածքների, վեպերի, պիեսների մեջ, մնացել է անվթար, անխաթար և փոխարկվել մի մեծ համանվագի... Այդ համանվագի մեջ պղնձե փողեր են ղողանջում, որ ասես անվերջ կրկնում են. «Իմ սիրտը լեռներում է»... Բարության ձայնը, գթության բարբառն ու ցավի շրուկը գալիս, միահյուսվում ու փոխվում են մինչ այդ աշխարհում չլսված մի զարմանալի մեղեդու։ Ծնծղաներն այնտեղ հպարտորեն հնչեցնում են. «Ուր որ կերթաս, պոռա՛ Հայաստան», իսկ ջութակները թավ ձայնով կրկնում են. «Սերը անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան»։



1919 թվական. ահա այսպես, Եղեռնից փրկված, ցրտից ու քաղցից կուչ եկած, սարսափը տեսած այս էակները ոտք դրին ամերիկյան մայրցամաք։

Եվ այսպիսին դարձան նրանք՝ ընդամենը մեկ սերնդի կյանքի ընթացքում. հպարտ, արժանապատիվ, ապահով։ Ծլարձակեց հայոց ոգին, հայոց ստեղծագործ միտքը։

Փլուզվող ֆիրմաների փրկիչը

Սույն թվականի հունվարյան համարներից մեկում Փարիզի «Լիբերասիոն» թերթը նշանավոր անձանց մասին պատմող էջը նվիրել էր Սերժ Զյուրիքին։ Համառոտ կենսագրականում նշված է. Զյուրիքտիշյան ընտանիքը՝ մազապուրծ քեմալականների արյունոտ յաթաղանից, 1922-ին Քեոթահիայից գաղթել է Մարսել, ուր և 1937-ին ծնվում է Սերժ Զյուրիքտիշյանը։

Հետագայում, արտասանության հեշտության և բարեհնչունության համար նա պիտի դառնար Սերժ Զյուրիք։ Իսկ մինչ այդ պիտի ավարտեր Թիեր լիցեյը, 1958-ին պոլիտեխնիկականը։

Նա այնքան էլ ջերմությամբ չի հիշում պոլիտեխնիկականը, ուր կային առաջնակարգ դասախոսներ ու նաև՝ ոչ այնքան լավերը։ Ամենից շատ նա էր ենթարկվում խստագույն պատիժների։ Դժվարությամբ ավարտելով պոլիտեխնիկականը, նա ընդունվեց ըսպառազինության բարձրագույն վարժարան։ «Ինձ հրապուրում էին հրթիռները»,— Սերժը այսպես բացատրեց իր ընտրությունը։ Շուտով նա ամուսնանում է կոմունիստական Լեհաստանից վտարանդի Էլենի հետ։ «Վարժարանում ինձ գրեթե չէին բարևում, խուսափում էին ընկերություն անել, բոլորի համար կարծես զոմբի էի դարձել։ Ամբողջ դասարանը հրավիրվեց Ամերիկա, բացի ինձնից»։

Խոցված ու վիրավորված, նա թողնում է Ֆրանսիան և մեկնում Ալժիր։ Որպես սպա մասնակցում ալժիրական պատերազմին։ Ամեն անգամ, երբ փորձ են անում հետաքրքրվել նրա կյանքի այդ ժամանակաշրջանով, կոպտորեն ընդհատում է զրուցակցին։

Չի նա չի կարողանում մոռանալ պատերազմն ու սպանդը, ոչնչով չարդարացված թափված արյունը, և մշտական սարսափը, որ անքաժան էր ֆրանսիական բանակից ու զինվորներից։ Նրան զարմացնում էր նաև Ֆրանսիայի երախտամոռությունը ալժիրցիների նկատմամբ։

Հոգնած պատերազմից ու նաև Ֆրանսիայից, առանց ապագայի նկատմամբ որևէ լուսավոր հույսի, նա ընդունվում է «Մորիլ» ֆիրմա և այնտեղ աշխատում ամբողջ 15 տարի։ Ծառայության վայրը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Հոլանդիա...

Վերադառնալով հայրենիք, նա մեկեն նշանակվում է Ռոն Փուլենք կոմպանիայի տնօրեն։ Անսպասելի և չափազանց բարձր պաշտոն։ Դա 1980 թվականն էր, երբ Ֆրանսիայում սկիզբ էր առել արդյունաբերության ազգայնացման գործընթացը։ Սերժ Զյուրիքը նկատում է, որ քաղաքականությունը բացահայտորեն միջամտում է ձեռներեցության և տնտեսության գործերին։

1986-ին Ռոն-Փուլենքի նախագահն է դառնում Ժակ-Ռենե Ֆուրտուն։ Մի առիթով նա այն ժամանակվա Ֆրանսիայի արդյունաբերության նախարար Մադելենին Զյուրիքի մասին կարծիք է հայտնում. «խոստումնալից ինժեներ է»։

Զյուրիքը հետո պիտի հիշի. «Մադելենը քաղաքական առաջին գործիչն էր, որ հետաքրքրվել է իմ համեստ անձնավորությամբ»։ 1986-ին նրան նշանակում են վերջին օրերը ապրող Սէ-Տե-Էֆ-Շիմ հսկա ձեռնարկության տնօրեն։

«Առնետները լքել էին նավը։ Ես աճռելի ջանքերի գընով կարողացա իմ շուրջը հավաքել երկու տասնյակ բարձրակարգ մասնագետների, մարդկանց, որոնք իսկապես սիրում էին իրենց ձեռնարկությունը։ Նրանք հրաշալի գաղափարներ ունեին, սակայն ոչ մի ժամանակ և ոչ ոք նրանց ոչինչ չէր հարցրել, և ես նրանց կարողացա խանդավառել»։ Իր կյանքի այս շրջանը Զյուրիքը ամփոփում է այսպես. «Դա արդյունաբերական իմ ամենագեղեցիկ պատմությունն էր, ամենահիսկական հրաշապատում հեքիաթ»։

«Փլուզվող ֆիրմաները փրկող վիրաբույժի» նրա համարումը ավելի ամրապնդվեց, երբ նշանակվեց հռչակավոր «Տոտալի» տնօրեն (1990 թ.)։ «Մեզ պետք էր բյուրեղյա մաքուր մարդ՝ ոչ այնքան հրապարակավ ճանաչված և ոչ էլ խիստ ներփակված»։

Զյուրիքը նոր տեղում իրեն դրսևորեց որպես ազնիվ, գիտակ ու տաղանդավոր ղեկավար։ Բարձրաշխարհիկության պակասն ու մի քիչ անհարթ հարաբերությունները քաղաքական գործիչների հետ չընխանգարեցին նրան, վերականգնել «Տոտալի» երերված վարկը։

1995 թվականին Սերժ Զյուրիքը նշանակվում է ֆրանսիական «Ալքաթել» ընկերության նախագահ։ «Ալքաթելը» հեռուստակապ է, հեռուստատեսային կոմունիկացիաներ ու սարքավորումներ, կապի միջոցներ, էներգետիկա, տրանսպորտ և այլն, և այլն։ Ճգնաժամ ապրող, 90 հազար աշխատող ունեցող համապարփակ այս կայսրության հեղինակությունը, ամրապնդումն ու հետագա ծաղկումը այսօր կապված է Սերժ Զյուրիքի անվան հետ։

«Ալքաթելի» պրեզիդենտի սավան հիշեցնող ճերմակ դեմքը նմանեցնում են կենդանի նյարդերից հյուսված կանվայի։ Դիմացինների համար միշտ հանելուկ է, թե ինչպես կարձագանքի նրա խոսքին՝ կբարձրացնի ձայնը, կըսաստի, թե զինաթափող անկեղծ ժպիտով կխրախուսի շարունակել խոսքը։ Նրա վարքը հաճախ են համեմատում սրի հետ՝ կտրուկ, ճշգրիտ, հատու։ Սա են ընդգծում շատշատերը, որոնք ինչ-որ ժամանակ բանակցություններ են վարել նրա հետ։ Կիրքը, որով լեցուն է նրա խոսքը, կարկամեցնում, անգամ ֆիզիկապես ճնշում է դիմացինին։

Զյուրիքին խենթացնում են դանդաղկոտությունն ու անպատասխանատվությունը, իսկ հիմարներից պարզապես սարսափում է։

Ինքը «Ալքաթելի» պրեզիդենտը այսպես է բնութագրում իրեն.

«Ես հանգստանում եմ միայն այն ժամանակ, երբ երաժշտություն եմ լսում. նոր գաղափարներ հղանում եմ, երբ մենակ եմ»։

Սիրում է հեծանվով զբոսնել արվարձանային քաղաքի խաղաղ ու հանգիստ փողոցներով, ուր նա արդեն Սե-Տե-Էֆ Շիմիի, «Տոտալի» և «Ալքաթելի» ամենակարող փրկիչն ու 10 տարվա ընթացքում Ֆրանսիայի ամենանշանավոր մարդկանցից մեկը դարձած Սերժ Զյուրիքը չէ, այլ սովորական մահկանացու, որի տարեկան աշխատավարձը 10 միլիոն ֆրանկ է։ Ընդամենը։

Ֆրանսիական մամուլի էջերից

Հրաչյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ես ընկել եմ պագշոտ Ծամիրամի նետից,
Հին Հոռոմն է զարկել ինձ մահացու խոցով,
Իմ արյունն են ոթել, խառնել Տղմուտ գետին,
Իմ լեզուն են այրել ատրուշանի բոցով։

Խաչ են դաջել կրծքիս բյուզանդական տեգով,
Արաբ նժույգների սմբակի տակ գցել,
Ինձ խարույկ են հանել մոնղոլների ձեռքով,
Սիրտս օսմանական սվիններին ցցել։

Ինձ հայրենի մեր տան թխկենուց են կախել,
Եվ հոգիս են բանտել շղթաներով երկաթ,
Ինձ զարկել են, խարկել ու կենդանի թաղել...
Բայց ես դեռ կա՛մ։

Տարեգրություն

(Սկիզբը՝ 1-ին էջում)

1974

— Ներկայացված այդ նույն զեկուցումը քննարկվեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նըստաշրջանում: Թուրքիայի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչները պահանջեցին հանել 30-րդ ենթակետը: Զեկուցումը վերադարձվեց ենթահանձնախումբ՝ վերամշակման:

1975

— Ապրիլի 8-ին ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը բանաձև (թիվ 148) ընդունեց 1975 թ. ապրիլի 24-ը «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր» հայտարարելու մասին:

1978

— ՄԱԿ-ի ենթահանձնախումբը կրկին անդրադառնալով դեռևս 1973 թվականին 30-րդ նստաշրջանին ներկայացված բանաձևի նախագծին, ամբողջությամբ զեկուցումից հանեց ցեղասպանության մասին արձանագրված պատմական մասը, որտեղ հիշատակվում էր նաև հայերի ցեղասպանության մասին:

1979

— Նույն բանաձևը ներկայացվեց ՄԱԿ-ի հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի քննարկմանը: Ձայների մեծամասնությամբ որոշվեց վերականգնել 30-րդ ենթակետը:

1982

— Թել-Ավիվում (Իսրայել) տեղի ունեցավ բնաջնջման և ցեղասպանության հարցերին նվիրված միջազգային գիտական կոնֆերանս:

1983

— Եվրախորհրդարանի քաղաքական հանձնաժողովը քննարկեց և որոշում ընդունեց հայկական հարցի քաղաքական լուծման մասին:

— Եկեղեցիների համաշխարհային ժողովը դատապարտեց հայերի ցեղասպանությունը:

1984

— Ապրիլի 13—16-ը Փարիզում տեղի ունեցավ ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը, որը քննարկեց հայերի ցեղասպանության հարցը: Ընդունվեց հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում:

— ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը ընդունեց բանաձև (թիվ 247) և պահանջեց կառավարությունից՝ 1985 թ. ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»:

— ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը կոչ էր անում կառավարությանը արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում հաշվի առնել հայոց եղեռնի հիշողությունը: Բանաձևը քննարկվեց և ընդունվեց Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից, սակայն հետագայում կառավարության ճնշման տակ այն կասեցվեց:

— Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆրանսուա Միտերանը հունվարի 7-ին հանդես գալով հատուկ ելույթով, դատապարտեց հայերի ցեղասպանությունը:

1985

— ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատ ներկայացվեց № 192 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից՝ 1985 թ. ապրիլի 24-ը երկրում հայտարարել որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման օր»: Բանաձևը քննարկվեց, սակայն մերժվեց ձայների մեծամասնությամբ:

— Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 102) ներկայացվեց ԱՄՆ-ի Սենատ և նույնպես մերժվեց:

— Ապրիլի 23-ին Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

— Ապրիլի 23-ին հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշում ընդունեց Ուրուգվայի Ազգային համագումարը:

— Հուլիսի 2-ին ՄԱԿ-ի ենթահանձնախմբի 38-րդ նըստաշրջանում քննարկվեց և հաստատվեց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Բենջամեն Ուայտեկերի զեկուցումը, որի 24-րդ ենթակետում «1915—1916 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակվում էր որպես ցեղասպանության օրինակ:

— Դեկտեմբեր ամսին Ֆրանսիայի Ազգային ժողովի փոխնախագահ Գի Դյուկլոնեն 35 պատգամավորների անունից հանդես եկավ, պահանջելով հատուկ օրենք ընդունել և ճանաչել «1915 թ. ցեղասպանությունը, որին զոհ դարձավ հայ ժողովուրդը»:

1987

— ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում հաշվի առնել հայոց եղեռնի իրականությունը: Սակայն այն մերժվեց:

— Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 247) ներկայացվեց ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատ և ձայների մեծամասնությամբ մերժվեց:

— Հունիսի 18-ին Եվրախորհրդարանը ընդունեց հատուկ բանաձև «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»:

— Աթենքում (Հունաստան) հրավիրվեց միջազգային գիտական կոնֆերանս՝ նվիրված «Հայկական հարցը և թուրքական ծավալապաշտությունը» թեմային:

1988

— Նոյեմբերի 22-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին»:

— Օքսֆորդում (Անգլիա) հրավիրվեց «Հիշել հանուն ապագայի» թեմայով միջազգային գիտական նստաշրջան, որտեղ բազմիցս հիշատակվեց հայոց ցեղասպանությունը:

1989

— Կալիֆորնիայի (ԱՄՆ) համալսարանում հրավիրվեց միջազգային գիտական նստաշրջան «Հայերի ցեղասպանություն-պատմություն, քաղաքականություն, բարոյագիտություն» թեմայով:

— Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Սան-Անտոնիոյում կայացած համագումարը հատուկ որոշում ընդունեց հայերի ցեղասպանության մասին, կոչ անելով խորհրդի բոլոր անդամներին՝ «դիմել իրենց երկրների կառավարություններին, ճնշում գործադրելու Թուրքիայի վրա՝ հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով»:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Պարոն նախարար, ելույթի համար ցուցակագրվածները սպառվեցին: Խոսքը ձեզ է տրվում:

ԼԱՄՊՐՈՍ ՊԱՊԱԴԻՄԱՍ (ներքին գործերի, հանրային կառավարման և ապակենտրոնացման նախարարի տեղակալ)— Պարոն նախագահ, պարոնայք գործընկերներ: Իրապես այսօրվա քննարկումը բարեբախտ էր: Մեզ բոլորիս, որպես հելլենների, այն պատիվ է բերում: Այսպիսի պահերին առանձնապես ես երջանիկ եմ զգում, որ ներկայացնում եմ կառավարությունը:

Հավատացած եմ, որ մարդկության համար այդ ամոթալի դեպքից մինչև այսօր եղած հունական բոլոր կառավարություններին ոչինչ չի արգելել նման թեմա խորհրդարան մտցնելու: Դա մեր ազգին բնորոշ անհոգությունն է: Բայց և ոչ մի նպատակադրում չթելադրեց «Քաղաքական գարունի» պատգամավորներին՝ ներկայացնելու օրենքի այս առաջարկը: Այն թելադրեց իրենց իսկ հոգին, իրենց պարտքը, և արժանացան խորհրդարանի բոլոր թևերի անմիջական ու ջերմ հավանությանը: Եվ այսօր այս միահամուռ քննարկման գործընթացը, այս գեղեցիկ ելույթները, որ ունեցան զեկուցողներն ու քննարկմանը մասնակցած բոլոր գործընկերները, դա իմ կարծիքն է, կազմում են լավագույն հոգեհանգիստը, որը կարող էր լինել հայերի ցեղասպանության այդ սոսկալի զոհերի համար, ինչպես նաև հաջորդած բոլոր ցեղասպանությունների զոհերի, որ կատարեց միշտ միևնույն դահիճը:

Ապրիլի 24-ը հայերի համար հիշատակի օր հաստատելը, կարծում եմ, միայն հիշատակի օր չի լինի: Այն, պարոնայք գործընկերներ, կլինի հարգանքի օր այն քաղաքակրթության, այն սկզբունքների համար, որոնց մեզ ծառայում ենք: Արդարության համար, մեր պատմության համար: Այն միաժամանակ կդառնա նաև դատապարտման օր ամեն տեսակ բարբարոսական գործողություններին, անսանձ ազգայնամոլությանը, մարդկային արժեքների ոչընչացմանը:

Որոշ գործընկերներ հարցրին, թե կառավարությունն ինչպե՞ս պիտի արժևորի այս օրենքը: Ձեմ կարծում, որ կամ առաջարկությունը ներկայացնողները կամ էլ ձեզանից որևէ մեկը դիտավորություն ունի սոսկ արժեքավորելու համար ընդունել մի օրենք, որը հարգեր ինչ-որ զոհերի հիշատակը:

Մենք, հույներս, դժբախտաբար թե բարեբախտաբար, տակավին չենք սովորել ծախել որոշ արժեքներ, դրանցով առևտուր անել: Մեկ ուրիշ հարգարժան գործընկեր հարցրեց, թե ինչպե՞ս և ե՞րբ պիտի արթնանա միջազգային հասարակական կարծիքը: Այնտեղ, դժբախտաբար, պարոնայք գործընկերներ, կան դիտավորություններ, և կուզենայի հավատալ, որ երբ համաշխարհային մակարդակով մարդկային արժեքները դըրվեն դիտավորություններից առավել բարձր, այնժամ մենք կարող ենք վստահ լինել, որ այս պատգամները, որ ուզում ենք, այսօր և հետագայում հղել մեր խորհրդարանից, կընդունվեն համայն աշխարհի հասարակական կարծիքի կողմից:

Ես չեմ ուզում հոգնեցնել խորհրդարանին: Կառավարությունն ընդունում է օրենքի առաջարկն այն ուղղումով, որ պ. Բանտուվասը առաջարկեց առաջին հոդվածի վերաբերյալ, որն ընդունում են առաջարկը մտցնողները:

Կոնկրետ, առաջին հոդվածում և վերնագրում ջնջվում են «թուրքական վարչակարգի» բառերը, դրանք փոխարինվում են «Թուրքիայի» բառով:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ— Ե՛վ վերնագրում, և՛ առաջին հոդվածում:

ԼԱՄՊՐՈՍ ՊԱՊԱԴԻՄԱՍ— Համաձայն եմ, պ. գործընկեր: Ես ավելացնելու ոչինչ չունեմ: Շնորհակալություն:

(Ծափահարություններ բոլոր թևերից):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Որևէ գործընկեր ուզո՞ւմ է երկրորդ անգամ ձայն վերցնել:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ— Ուզում ենք, պ. նախագահ, շնորհակալություն հայտնել պ. նախարարին և ամբողջ խորհրդարանին:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ— Պարոն նախագահ, ես առկախ թողեցի մի հարց: Ուշադիր լսեցի պ. նախարարին: Այն իմ սպասածը չէր: Մենք դեմ չենք քվեարկի, բայց պ. նախագահին խնդրում եմ, որ արձանագրության մեջ պարզ լինի, թե մենք քվեարկում ենք՝ «ներկա»:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— «Քաղաքական գարունի» առաջարկած «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին» օրենքի քննարկումը հայտարարվում է ավարտված:

Հարցնում ենք խորհրդարանին: Առաջարկված օրենքն ընդունվո՞ւմ է:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ— Ընդունվում է, ընդունվում է:

(Ծափահարություններ):

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ— Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Հետևաբար, «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին» օրենքի առաջարկը միաձայն ընդունվում է, նշելով, որ պ. Կոլոզովը քվեարկում է՝ «ներկա»:

Անցնում ենք հոդվածների քննարկմանը:

Ոչ ոք չի ցուցակագրվել հոդվածների քննարկման առթիվ ելույթի համար:

Ուստի անցնում ենք դրանց քվեարկությանը:

Հարցնում ենք խորհրդարանին՝ ընդունելի՞ է առաջին հոդվածն այնպես, ինչպես վերափոխվեց պ. նախարարի կողմից:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ— Ընդունելի է, ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ— Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Հետևաբար, երրորդ հոդվածն ընդունվեց միաձայն, ինչպես որ այն վերափոխվեց պ. նախարարի կողմից, պ. Կոլոզովի նշումով:

Հարցնում ենք խորհրդարանին՝ երկրորդ հոդվածն ընդունելի՞ է, ինչպես որ կա:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ— Ընդունելի է, ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ— Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ— (Նիկոլաոս Կացարոս)— Հետևաբար, երկրորդ հոդվածն ընդունվեց միաձայն, պ. Կոլոզովի նշումով:

Հարցնում ենք խորհրդարանին՝ երրորդ հոդվածն ընդունելի՞ է:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ— Ընդունելի է: Ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ— Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Հետևաբար, երրորդ հոդվածն ընդունվեց միաձայն, պ. Կոլոզովի նշումով:

Հարցնում ենք խորհրդարանին՝ օրենքի առաջարկն ամբողջությամբ ընդունելի՞ է:

ՊՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ— Ընդունելի է: Ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ— Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Օրենքն ամբողջությամբ ընդունվեց միաձայն, պ. Կոլոզովի նշումով:

Հետևաբար, «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին» օրենքը միաձայն ընդունվեց և ըստ հոդվածների, և ամբողջության մեջ, որն այսպիսին է. «Ապրիլի 24-ը հաստատվում է որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր»:

ՀՈԴՎԱԾ 1

Ապրիլի 24-ը սահմանվում է որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր:

ՀՈԴՎԱԾ 2

Հիշատակի միջոցառումների բնույթը, բովանդակությունը, պատասխանատվությունը և դրանց կազմակերպման եղանակը որոշվում են նախագահական հրամանագրով, որը հրատարակվում է ներքին գործերի, հանրային կառավարման և ապակենտրոնացման նախարարի առաջարկությամբ, առավել ճանաչված հայկական միությունների ու կազմակերպությունների կարծիքից հետո:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Կառավարության թերթում» հրապարակման օրից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Խնդրում եմ, որ խորհրդարանը լիազորի նախագահությանը, որպեսզի վերացնի վերոհիշյալ օրենքի առաջարկությանը քննարկմանը և քվեարկությանը վերաբերող այսօրվա նիստի արձանագրությունը:

ԲԱԶՄԱԹԻՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ— Իհարկե, իհարկե:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Պահանջված լիազորությունը տրվեց:

ՊԱՆԱՅՈՏԻՍ ԿՐԻՏԻԿՈՍ (Խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ)— Պ. նախագահ, անհետաձգելի պարտականություններն ինձ հեռու պահեցին այս դահլիճից, և ես չկարողացա մասնակցել բարոյական ու քաղաքական մեծագույն նշանակություն ունեցող մի թեմայի քննարկմանը, ինչպիսին է հայերի ցեղասպանությունը և թուրքական բարբարոսության թեման: Պ. Նախագահ, պիտի խնդրեի մեկ բոպե լռությամբ հարգենք հայերի և բոլոր ցեղասպանության զոհերի հիշատակը:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս)— Պ. Կրիտիկոսի առաջարկը նախագահությունն ընդունում է և խնդրում հոտընկայս պահպանել մեկ բոպե լռություն:

(Տիրում է մեկ բոպե լռություն):

Հավերժ փա՜ռք նրանց հիշատակին:

(Աթենք, 25 ապրիլի 1996 թ., հրապարակվում է խորհրդարանի նիստի վերջին հատվածը)

ԲՐԱԲԻՈՆ ԾԱՂԻԿ ՈՐՈՆՈՂԸ

...Թելո Մեսրոպն ու հարեվան գյուղացին վեճի մեջ են՝ որքա՞ն է միլիոնը: Վիճում են ու գնում ս. Ախբերիկ պարզելու, թե որքան է միլիոնը՝ հարյո՞ւր հազար, թե՞ հազար հազար: Հենց այդքան հայ զինվոր է հարկավոր՝ հայոց լեռները մաքրելու չարքերից... Բայց, ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ. մի տղա, մեն-մենակ մի ջահել՝ Կարմիր իրիցու տնից, անունն Արաբո, ձին հեծած կանգնել է Ծիրնկատարին, սուլթան Համիդին կռիվ է հայտարարել:

Հայ ֆիդայական շարժման սկիզբը այսպես հեքիաթային, բայց պատմականորեն ճիշտ, մեզ ներկայացնելով, Խաչիկ Դաշտենցը հարց է տալիս՝ որքա՞ն ժամանակ է անցել, ահա, քսաներորդ դարի մուտքն է, բայց Դավթից մինչև Արաբոն ծիածանի կամարի տակ լեռների ու նրանց մարդկանց ճակատագրում ի՞նչն է փոխվել. կայծակնահար նույն լեռներն են, չարքերով լցված նույն վիհերը, իր մենակությանը խաչված նույն ժողովուրդը և ըմբոստ ճակատով նույն միայնակ զինվորը՝ անունը Դավիթ թե Արաբո:

...Մոսե Իմոն հասել է մինչև Ինգլիզ և քրիստոնյա թագավորից, ի տեղ օգնության, մի օրորոց է ստացել նվեր: Այդ լեռների պատվիրակը աշխարհի հզորներից հզոր ո՞ր թագավորի դուռն էլ գընար, այդ օրորոցը կստանար՝ օրորիր հույսդ:

Հույսը դարձյալ հրաշքն է: Պայթող աղբյուրի ակունքից հայտնվող Քուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից հայտնվող հրեղեն ձին:

Այդ հրեղեն ձին Արաբոն էր:

Այդ հրեղեն ձին Աղբյուր Սերոբն էր, Սպաղաց Մակարն էր, Գևորգ Չաուշը, Անդրանիկը, Դժոխք Հրայրը, Սմբատը, Գալեն, Չոլոն, Մորուք Կարոն, Արծիվ Պետոն, Սևքարեցի Սաքոն, Կայծակ Անդրիասը, Տեր Քաջի Ադամը, Կոտո Հակոբը, Լաճկանցի Արթենը, Առղա Ջորիկը, Ալադին Միսակը, Բրինդարը, Սեյդո Պողոսը, Արտենքա Ջնդոն, Մուքոն, Բամբակու Մելոն, այդ հրեղեն ձին Շենիքցի Մանուկն էր, Փեթարա Մանուկը, Փեթարա Թադեն, Փեթարա Ախոն, Փեթարա Իսրոն...

Պայթող Աղբյուրի հրաշքը հայ ֆիդայիներն էին:

Հրեղեն շնչով այրեր, հայրենիքի մատաղացու որդիներ, որ ապրեցին միայն հայրենիքի կյանքով և դեռ իրենց կենդանության ժամանակ դարձան պատմություն:

...Անօրենները դժոխք էին դարձրել այն երկիրը, ուր գործում էին հայ ֆիդայիները: Եվ նրանք կամք էին հագել դժոխքի բոցերից կարված կրակե շապիկները: Հայրենիքի որդու առաքելությունն էր դա: Ինչպե՞ս կարող է լինել հանգիստ և անձնական ապահով կյանք, երբ հայրենիքն ինքն է անապահով, որտեղի՞ց պետք է հայտնվի անձնական երջանկությունը, երբ հայրենիքն ինքն է ապերջանիկ, ո՞ւր կտանի անձնական փառքի ձգտումը, երբ հայրենիքն ինքն է անփառունակ, ո՞րն է անձնական սերը, երբ սիրո օրորոց հայրենիքը դժոխքի վերակացուն է օրորում:

Քարանձավն էր նրանց տունը, ամենաշատը, ամենաշատը՝ գյուղեզրի մարագը կամ գոմը: Խոտը կամ ձյունն է նրանց անկողինը, փոթորիկն է նրանց սպիտակեղենը, քարն է նրանց բարձը, սեփական շունչն է նրանց կրակը: Ջենքի հետ պսակված, ուսապարկերում մի կտոր կորեկհաց կամ մի բուռ փոխինձ, ուսապարկերում իրենց պատանքացուն, հպարտ ճակատները թշնամու նենգ գնդակի դեմ բաց, զոր ու գիշեր լեռներում քայլում են կրակե շապիկ հագած աստվածները:

Արարչություն է անանձնական կյանքը: Այդպիսի կյանքով կարող է ապրել միայն նա, ով իր ազատությունը չի զատում հայրենիքի ազատությունից, ով իր փառքը չի բաժանում հայրենիքի փառքից, ով իր երջանկությունը չի բաժանում հայրենիքի երջանկությունից, ով իր սերը չի զատում հայրենիքի սիրուց... Ասպետություն, ազատություն, հերոսություն, փառք և երջանկություն է անանձնական կյանքը: Եվ անսահման է անանձնական կյանքի սահմանը:

Կարմիր իրիցու տան երբեմնի ավետարանում գըրված է եղել թե՝ ավետյաց երկրի լեռներում մի ծաղիկ է աճում՝ երջանկության Բրաբիոն ծաղիկը: Շատերն են ելել երջանկության ծաղիկը որոնելու, էն գլխեն որոնել են, բայց ոչ մեկը չի գտել: Եվ երջանկության ծաղկի ետևից գնացողը այլևս համարվում էր ցնորքով տարված, խենթ:

Այդ «խենթը» Կարմիր իրիցու տան Արաբոն էր:

Հայոց լեռների երջանկության ծաղիկ որոնող «խենթերը» ֆիդայիներն էին:

Մի տղա, միայնակ ու ասպետ մի զինվոր՝ արյունարբու ու նենգ մի բանակի դեմ: Յոթ զինվոր՝ յոթ բանակի դեմ: Ամենաշատը քառասուն զինվոր՝ քառասուն հազարանոց արյունարբու ու նենգ բանակի դեմ («Քառասուն» թիվը հեքիաթային է, իսկ պատմությունը՝ իրական): Միայնակ զինվորը գիտեր, որ մի բանակի հաղթել չի կարող: Քառասունը գիտեին, որ հաղթանակը քառասուն գազ խորը՝ քառասուն ջրաղացքարի տակ է, սակայն... որոնում էին իրենց լեռների Բրաբին ծաղիկը: Կհաղթես, թե կպարտվես՝ չարի դեմ չարանալը առաքելություն է, կգտնես, թե ոչ՝ հայրենիքի երջանկության ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է:

Ուխտին հավատարիմ՝ զենքին պսակված, նրանցից շատերը փաթաթվեցին իրենց պատանքացու կտավներով և, որպես Բրաբիոն ծաղկի հունդեր, թաղվեցին սարերում: Ով մնաց՝ տեսավ հայ գողգոթան: Եվ տեղահանվող, լլկվող, մորթվող ու այրվող ժողովրդի համար դարձավ պաշտպան բանակի խորհրդանիշ և բանակ, առաջնորդի խորհրդանիշ և առաջնորդ, կամքի խորհրդանիշ և կամք, հույսի խորհրդանիշ և հույս...

Մուշեղ ԳԱԼՇՈՅԱՆ
Դաշտենցի ծննդյան 70-ամյակի առթիվ գրված խոսքից

Աշխարհի շատ արխիվներում պահվում են հայերի ցեղասպանության հետ կապված սահմռկեցուցիչ վավերագրեր, լուսանկարներ: Դրանք վկայում են թուրքերի վայրագությունների, գազանությունների մասին: Բայց նույն արխիվները պահել ու սերունդներին են հանձնել հայոց ոգու վերածնվելու, ծլարձակելու հզոր ուժը ներկայացնող պատկերներ: Դպրո՞ց՝ ավերակների մեջ, դպրո՞ց՝ որբերի համար, այն ժամանակ, երբ դեռ այս փոքրիկների հայրենիքում շարունակում էին իրենց «խրախճանքը» գիշատիչները: Այո՛, դպրո՞ց, դպրությո՛ւն... Այս փոքրիկները, որ փրկվել էին սրից, հիմա փրկության երկրորդ շրջանն էին ապրում՝ հայ մնալու, հարազատ լեզուն և պատմությունը չմոռանալու, հիշելու, թե ո՞վ ես դու, որտեղի՞ց ես սերվել, հիշելու հայրենիքդ, հարազատ օջախդ, ինքդ քեզ... Եվ փա՜ռք այն մարդկանց, որ Հալեպի արվարձանում կիսավեր, լքված պահեստի դարակները դարձրին «դասասենյակներ», աբ ու բուկների քաղաքներ ու նրանց կապեցին, թեև խոցված, բայց կենդանի ու հզոր իրենց արմատների հետ, պահպանեցին նրանց հիշողությանը, վառ պահեցին հայոց կանթեղը:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ապրիլի 22-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, նըվիրված հայ ժողովրդի բարեկամ, աստվածաբան, դոկտոր Յոհաննես Լեփսիուսի 140-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էին հյուրեր Գերմանիայից, Իտալիայից և Ավստրիայից: Կարդացվեցին 1915 թվականի հայոց ցեղասպանությանը վերաբերող վեց զեկուցում:

ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Ապրիլի 23-ին ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին հանձնվեց Յոհ. Լեփսիուսի արխիվի գիտական նկարագրման ցուցակը: Նույն օրը մեծ եղեռնի հուշահամալիրի պատի մեջ ամփոփվեցին լորդ Ջեյմս Բրայսի, Յոհաննես Լեփսիուսի և Ֆրանց Վերֆելի գերեզմանաթմբերից բերված հողով լի սափորները:

Մանրամասները՝ հաջորդ համարին:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

«Դու, հայ ժողովուրդ, մեծ, ամուր ժողովուրդ։ Ինչեր տեսար... Աշխարհք ամեն վրադ թափվեցին, մարդ չմնաց, որ չխոցեր քեզ, ատամ չմնաց, որ չկրծեր քեզ և գարշապար, որ չկոխեր քեզ... Բայց դու մնացիր մեծ ու անսասան։ Աշխարհը լիներ քո տեղը՝ կփլվեր, օվկիան լիներ՝ կցամաքեր, երկինք լիներ՝ կմարեր իր արևներով ու աստղերով...»։

Ժ. Պ. ԱԼԵՄ

«Երբ նայում ենք ջարդերի ու ավերումների երկար շարանը, որոնք վերացրել են քարտեզից անթիվ քաղաքներ, ամայացրել ընդարձակ երկրամասեր, առաջ են բերել ժողովուրդների գաղթեր, հիանում ենք հայ ժողովրդով, որը ոչ միայն դիմացավ ոչնչացման, այլև մերժեց ուծացումն ու դավանափոխումը (իսլամականի), որոնք կարող էին վերջ դնել նրա դժբախտություններին։

Այդ հիացմունքին խառնվում է երախտագիտությունը, որովհետև եթե հայ ազգը անհայտանար կամ միաձուլվեր հարևան ազգերին, ապա քաղաքակրթության շենքից կըպակասեր մի քար, գուցե և գմբեթ»։

«Լյո Դևիլ Նասիոնալ Արմենիեն», էջ 25

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ

Ռուս լեզվաբան-հայագետ

Հայերը ոչ միայն առաջինը, այլև միակն են եղել արևելյան ազգերից, որ Եվրոպայի մշակույթի յուրացմանը նպաստելու նպատակով գիտական հաստատություններ են հիմնել Եվրոպայում։ Հիշեցնեմ Մխիթարյանների գործը, նկատելով հանդերձ, որ այն շրջանում եկեղեցին էր եղել միակ ազգային շահերը մարմնացնող հասարակական կազմակերպությունը։ Հարյուր տարի վերջ, էլի հայերն էին Լազարյան ճեմարանի հիմնադիրները։

Ինչ ասել է խաչքար՝ հայոց ճարտարապետության մեջ. ամենազգայուն ժողովրդի բոլոր խավերի, վերին շերտերից մինչև ստորինը, մտերմագույն հիշատակարանը, որի վրա անդրադառնում է ազգային քանդակագործության զարգացման ամեն քայլափոխ և հաճախ զուգված երևան են գալիս հայ ճարտարապետության երկու հոսանքը՝ եկեղեցական և աշխարհական։ Եվ դարձյալ, ի՞նչ ասել է խաչքար, հայկական գեղարվեստը բացառիկ կերպով բնորոշող մի «հուշիկ հայրենյաց»։

ԵԳՈՐ ՍՏՐՈԵՎ

Ռուսաստանի Դաշնության դաշնային ժողովի նախագահ 23.01.1998 թ.

Անհիծյալ լինի այն ժողովուրդը, որ ձեռք է բարձրացնում ուրիշ ժողովուրդների կյանքի վրա։ Ցեղասպանությունը համաճարակի պես խոցում ու մթագնում է գիտակցությունը և հանգեցնում ամբողջ պետությունների պատմական ողբերգությանը։

Հայերն ու հրեաները. ցեղասպանության հասցեները

Ի տարբերություն պատմական վաղ դարաշրջաններում կատարված կոտորածների, 20-րդ դարի ցեղասպանության երևույթը պայմանավորված է մի շարք առանձնահատկություններով, երբ իշխող գերազգայնական վերնախավերը օժտված էին չտեսնված մեծ կարողություններով, վերնախավեր, որոնց տնօրինության տակ էին գտնվում մարդկանց մասսայական ոչնչացման հզոր միջոցներ։

Այդ առանձնահատկությունները հատկապես դրսևորվում են՝

1. կազմակերպչական յուրահատկությամբ
2. ծրագրավորմամբ, պլանավորմամբ և ժամանակի ընտրությամբ
3. բյուրոկրատական արդյունավետությամբ և համապարփակվածությամբ
4. տեխնոլոգիական կարողությամբ
5. գաղափարախոսության անհրաժեշտությամբ։

Այս հինգ բնութագրումներն էլ առկա էին և հայերի, և հրեաների ցեղասպանության մեջ։

Վերոհիշյալ առանձնահատկությունները հիմնականում պետական մեքենայի արդիականացման արդյունք ու հետևանք էին։

Տեխնոլոգիական միջոցներով զինված լինելը ու դրանց օգտագործման լայն հնարավորությունները, գաղափարապես հագեցած կազմակերպական ցանցը ամբողջատիրական այնպիսի միջավայր են ստեղծում, երբ զոհերի համար փրկվելու գրեթե հույս չի մնում։ Այս չափանիշները տարբեր ժամանակներում գործեցին և օսմանյան Թուրքիայում, և նացիստական Գերմանիայում։ Երկու ցեղասպանությունների դեպքում էլ կարևոր տեղ էր գրավում ժամանակի գործոնը. դրանք իրագործվել են պատերազմի ընթացքում, երբ դրսից միջամտությունը գրեթե անհնար էր դառնում։

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից Թուրքիան դաշինք կնքելով Գերմանիայի հետ, առաջին հերթին նպատակ էր հետապնդում դաշինքի միջոցով ձեռք բերել ռազմական, տեխնիկական և տնտեսական օգնություն։

Գերմանիայի ազդեցությամբ էլ Թուրքիայում ձևավորվեց իր ժամանակի իշխող վերնախավի գաղափարախոսությունը և քաղաքականությունը։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ թուրք առաջնորդները որդեգրեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որը, փաստորեն պանգերմանիզմի կրկնօրինակումն էր։

Ներկայումս պատմագիտական հետազոտությունների և արխիվային նյութերի ուսումնասիրությունների հիման վրա համոզված կարելի է ասել, որ միայն ու միայն Գերմանիան կարող էր Թուրքիայի վրա ճնշում գործադրել՝ կասեցնելու և չիրագործելու հայկական կոտորածները, որը սակայն գիտակցաբար նա չարեց։

Կես դար էլ չանցած, Գերմանիան ինքը սկսեց հրեաների ջարդը։ Հայկական և հրեական ցեղասպանությունները որոշակի ընդհանրություններ ունեն, որոնք բխում էին օսմանյան և գերմանական կայսրությունների սոցիալ-տնտեսական և ռազմա-քաղաքական կացությունից։

Որո՞նք էին երկու ժողովուրդների ցեղասպանությունների միջև գոյություն ունեցող այդ ընդհանրությունները։

1. Արհամարհված և վիրավորված փոքրամասնության բազմադարյան պատմությունը.

2. Մեծամասնության մեջ իշխող մշակութակրոնական ցածր մակարդակը, որի ազդեցությունը մարդկանց վրա այնքան էլ գործուն չէր, սակայն հանցագործներին ուժ էր ներարկում.

3. Կառավարությունն իբրև գործիք ուներ ուժեղ գաղափարական, քաղաքական շարժում՝ ահաբեկչության ձևով։ Այդ շարժման անդամները խստացնում էին ներքին կարգապահությունը և արհամարհական վերաբերմունք ցուցաբերում բարոյականության և ընդհանրապես բարոյական ամեն մի սահմանափակման հանդեպ։

4. Բազմակարծության (պլյուրալիզմի) թույլ ավանդույթներով մի հասարակության առկայություն, որին հատուկ էր պաշտոնակարգության (հիերարխիայի) և ռազմական ապարատի միաձուլումը, և որը անհանգիստ փոքրամասնությանը «ներքին թշնամի» որակելով, նրան ավելի վտանգավոր էր համարում, քան արտաքինը։

5. Պատերազմական վիճակը, որը կառավարողներին գործելու անսահմանափակ հնարավորություն էր ընձեռում, ազգային փոքրամասնություններին դարձնում էր ավելի անօգնական։

6. Ազգային փոքրամասնության անպաշտպան վիճակը, որը հանգեցնում էր դիմադրելու անկարողության։

7. Գաղափարախոսության փիլիսոփայությունը, որն արդարացնում էր բռնությունն ու դաժանությունը, երբ դրանք ծառայում էին քաղաքական «մեծ» նպատակի իրագործմանը։

8. Բյուրոկրատական ձևերի (խաբեություն, կեղծիք) օգտագործումը պատասխանատվությունից խուսափելու համար։

9. Պրոֆեսիոնալ մակարդակի հասնող ռազմական ուժերի քաղաքականացումը։

10. Կառավարական մարմինները և ստորաբաժանումները մոլեռանդներով համալրելը՝ զանց առնելով ամենատեսակ արգելք և հավասարակշռություն։

11. Ջարդերի ծրագրի իրագործումը պրոֆեսիոնալ հանցագործների միջոցով։ Թուրքիայում Բեհաադդին Շաքիրի գլխավորությամբ ստեղծված «Հատուկ կազմակերպության» մեջ մտած ջարդարարական ջոկատները համալրվեցին բանտերից վաղաժամկետ ազատ արձակված հանցագործների հաշվին, որոնց առջև որպես հիմնական խնդիր էր դրված «լուծել» Հայկական հարցը։ Գերմանիայում Հիտլերի գլխավորությամբ գործող նացիստական կենտրոնական անվտանգության բաժանմունքի միջոցով 6000 պրոֆեսիոնալ հանցագործներ բանտերից ազատվեցին և ուղարկվեցին համակենտրոնացման ճամբարներ, մասնակցելու հրեաների ողջակիզմանը։

12. Ավարառության և կողոպուտի անհրաժեշտությունը՝ զոհերին հափշտակելու միջոցով։

13. Պատերազմական գործողությունների ժամանակ տարբեր ճակատներում կրած անհաջողություններից հետո, ընդհանուր պարտության մոտալուտ վտանգը ուժեղացրին կոտորածները ու նոր թափ տվեցին ջարդերը։

Հրեաների սպանդի և հայերի ցեղասպանության միջև գոյություն ունեցող ընդհանրությունների կողքին կան նաև մի շարք տարբերություններ։ Հիմնականում դրանք պայմանավորված են օսմանյան և նացիստական հասարակարգերի միջև զարգացման ընդհանուր մակարդակի անհամապատասխանությամբ։

Կարևոր հանգամանք էր զոհերի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի տարբերությունը։ Հրեաները նացիստների կողմից դիտվում էին որպես ցեղային և տնտեսական վտանգ։ Թուրքերը հայերի մեջ տեսնում էին պոտենցիալ տրնտեսական և քաղաքական վտանգ, որը սպառնում էր պանթուրքական պետության ընտեղծմանը։

Եվ վերջապես նացիստները ստորադաս ազգ էին համարում հրեաներին, իսկ հայերը բնակվում էին օսմանյան տիրապետության տակ գտնվող սեփական հայրենիքում՝ մի տարածքի վրա, որը համարվում էր ժողովրդի կազմավորման բնօրրանը։

ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ

Ֆրանսիացի գրող

Մենք հասկացանք, որ երկարամյա անհավասար պայքարը թուրք կեղեքիչի և հայի միջև դեսպոտիզմի, բարբարոսության պայքարն է, ընդդեմ արդարացիության և ազատության ոգու։ Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին՝ մեզ հասած մարող աչքերով, որոնցում առկայծում էր հույսի շողը, ի վերջո, հասկացանք, որ մեր այդ քույրը մահանում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, և նրա մեղքն այն է, որ բաժանում է մեր զգացմունքները, սիրում է այն, ինչ մենք ենք սիրում, հավատում է նրան, ինչին մենք ենք հավատում, և մեզ նման գնահատում է իմաստությունը, արդարությունը, պոեզիան և արվեստը։

Այս է նրա անքավելի հանցանքը։

ԷՄԻԼ ԴԻԼՈՆ

Իռլանդայի գիտնական, լրագրող

Հայաստանում թուրքական անիրավությունների ամենահուզիչ և սրտաճմլիկ նկարագրությունը շատ ավելի թույլ է սարսափելի իրականությունից։ Փաստերը հաճախ այնպիսի զայրացնող բնավորություն ունեն, որ միայն փափուկ զգացմունքները վերապրելու կամ ընթերցողների կասկածը հարուցանելու վախն է, որ արգելում է նրանց հրապարակ հանել։

ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՑ, ԿՈՂԵՄ ԱՊՐՈՂԱՑ

«Մի քանի տարաբախտների հաջողվում է փրկվել, բոբիկ, տկլոր, սովատանջ հասնել Քեմախի։ Դրանք քայլող կմախքներ էին։ Գազանային սպանդը սկսվում է նորից ու նորից։ Եփրատի ջրերը տանում են այնքան դիակներ, որ դրանք տեղ-տեղ կուտակվում են, խանգարում գետի բնական ընթացքին»։

(ԱԿԱՆԱՏԵՍ)

Սա լոկ մի ձայն է՝ փոքրիկ մի բեկոր, պոկված պատմական ամբողջությունից։ Եղել է եղեռն, եղել է ոճիր... Ու հազարների նման այս մեկն էլ է տեսել այն, ինչ եղել է, մինչդեռ աշխարհը կույր էր, ասես մի կողմ էր քաշվել ու չէր ցանկանում նկատել ոճիրը։

Ո՞վ դատապարտեց հայ ժողովրդին, այդ ո՞ր հրեշը դարձավ «դատավոր» ու որոշեց աշխարհի երեսից ջնջել մի ժողովուրդ՝ իր սեփական հայրենիքում, իր հարազատ օջախում։ Քոչվոր, բռի, վավաշոտ մի ցեղ էր դա, քոչվոր ցեղ, որի առաջնորդներից մի Քյամիլ փաշա, արյունոտ մտքով, նստեց, «մտածեց» երկար ու բարակ և թաքուն-թաքուն (ու նաև ի լուր համայն աշխարհի) գրոտեց այսպես. «Հայ ազգը վերացնելու, անհետ և անճետ ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիլ մեզ. ամեն գործիք պատրաստ ունենք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, ոստիկան, հարկահան, վերջապես ամենայն ինչ։ Կրոնական պատերազմ մը կհրապարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն, և ոչ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք զենք էլ ունենք, զինվորություն էլ, աշխարհիս ամենամեծ տերություններեն մեկն (Անգլիա) և ամենեն հարուստը մեզ զինակից է և մեր ասիական աշխարհքին երաշխավորը։ Եվ, եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպա կրոնակից մը փնտրե և չի գտնե տաճկական Ասիո մեջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կը զբաղինք ներքին գործերով և բարեկարգությամբք»։

Սկսվեց մեծ սպանդը և Ռես-Ցուլ-Այն, Ռթիլլի, Դեյր էլ Զոր անապատները վերստին անմեղ արյամբ ներկվեցին և դրոշմվեցին որպես մի խարան այս խուլ մարդկության անգութ ճակատին։

— Ողբա՜մ մեռելոց...

Հայերիս հաճախ «լալկան» են կոչում, իբր սիրում ենք ողբալ, սիրում ենք խեղճի, տառապյալի կեցվածք ընդունել։ Հազար անգամ ո՜չ։ Պարզապես երբեք, որքան էլ կյանքը ժպտա մեր ազգին, մենք չենք մոռանա կանչը այն արյան, որը լարդացավ պատմության վրա՝ որպես ամոթանք։

— Ողբա՜մ մեռելոց...

Իր նախամարդու տգետ ուղեղով կարո՞ղ էր, արդյոք, նույն Քյամիլ փաշան պատկերացնել, որ ազգն այս ջնջել հնարավոր չէ։ Եվ որտեղի՞ց էր նա իմանալու, որ հայոց ոգուն կեռ յաթաղանը չի դիմանալու, փշրվելու է հայոց կամքի դեմ ու տոկունության, որ մեր հավատի փառահեղ լույսը երբեք չի մարի։

— Ողբա՜մ մեռելոց...

Այսօր կարող ենք շատ երկար խոսել, կարող ենք բերել փաստերի հեղեղ՝ այն ճղճիմ ու բութ փաստարկների դեմ, որ փորձ են անում պատմության միջից կորցնել, ջնջել այս մեծ ոճիրը։ Բայց ո՞նց մոռանանք, ո՜ւմ մոռանանք, երբ նորից գարուն է ու նորից ապրիլ, երբ անմեղ զոհերի արյան վրեժը դեռ չի հատուցվել, երբ աշխարհի չորս ծագերում դեռ դեգերում են մեր բեկորները ու սպասում են տունդարձի օրվան։

Եկեք մեկ առ մեկ հիշենք բոլորին, բայց չմոռանանք, որ պետք է ապրենք ու ապացուցենք այս մեծ աշխարհին, որ հավերժ է ու հզոր հայոց ոգին, որ նրան սպանել հնարավոր չէ։

— Ողբա՜մ մեռելոց, կոչե՜մ ապրողաց...

Ասքանազ ԱՍԼԱՆՅԱՆ

ԱՆԱՍՏԱՍԻՈՍ ՆԵՐԱՆՋԻՍ

Հունաստանի «Նոր ժողովրդավարության» բանախոս, Պիրեայի պատգամավոր Անաստասիոս Ներանձիսի խորհրդարանում ունեցած ելույթից.

Հայտնի է, որ հայերը հանգիստ ժողովուրդ են, խաղաղասեր, ազնիվ ժողովուրդ, քաղաքակիրթ և բարձը հավատք ունեցող ժողովուրդ։ Այստեղ եկան արյունաքամ, բայց կարողացան Դրապեզոնայի, Կոկինիայի, Դուրդուտիի— այսօր Նեոս Կոսմոս— թիթեղածածկ խղճուկ բարաքներից հասնել նախանձելի մի աստիճանի։ Շարունակեցին իրենց քաղաքակրթությունը, պահպանեցին ցեղային առանձնահատկությունները, աչքի լույսի պես պահում են իրենց լեզուն և կրոնը, և մինչև օրս ճշմարիտ հավատարմությամբ հոգածում են իրենց բարքերի, մշակույթի վրա, մշտապես հենվում են իրենց ցեղի արմատներին։

Բնութագրական է, որ Նիկեայում, որն իմ ընտրատարածքի խոշորագույն քաղաքապետարանն է և ընդգրկում է նաև առավել մեծ թվով հայերի, նորերս առանց պետական օգնության կառուցվել է մի հոյակապ շենք՝ հայկական ճարտարապետության ոճով, և ներառում է խաղադաշտ, դպրոց, մշակութային օջախներ։

Ուրեմն, այս առաջարկի, այս քննարկման և մեր կայացնելիք որոշման նպատակը է արթնացնել և կենդանի պահել համաշխարհային հիշողությունը, գոնե վրդովել անտարբերությունը, որովհետև ոչ ոք չգիտի, թե հաջորդը ո՞ր ժողովուրդը կլինի։

Եվ, վերջապես, այս առիթով և դիվանագիտական վերապահումներից դուրս, որ ի վերջո ցույց են տալիս մեր անզորությունը, մենք պետք է հուժկու ձայնով գոռանք՝ էլ ոչ մի ուրիշ ռասայականություն, էլ ոչ մի ուրիշ ցեղասպանություն, թուրքերի ոչ մի ուրիշ գազանություն։

«Նոր ժողովրդավարությունը» անվերապահորեն կանգնած է ապրիլի 24-ը թուրքերի կողմից հայերի ցեղասպանության օր հռչակելու դիրքերում։

ԷՄԻԼ ՎԵՐՀԱՌՆ

Բելգիացի բանաստեղծ, դրամատուրգ

Հայ ժողովուրդը աչքի է ընկնում կենսասիրությամբ, դիմացկունությամբ, խիզախությամբ, իր ճշմարտության հանդեպ վստահությամբ։ Հենց այդ որակների շնորհիվ նա մշտապես հաղթող է դուրս եկել տարբեր փորձություններից։

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ

Հունաստանի «Քաղաքական գարունի» ներկայացուցիչ

«Դժբախտ հրեա ժողովուրդը գոնե տեսավ կանցլեր Վիլլի Բրանդտին՝ ծնրադրած համակենտրոնացման մի ճամբարում, կարծեմ Աուշվիցում, հրապարակավ ներողություն խնդրելիս համաշխարհային հասարակությունից, մարդկությունից։

Կա՞ որևէ մեկը, ոչ միայն այստեղ, ամբողջ աշխարհում, որ հավատա, թե Դեմիրելը կամ որևէ մեկ ուրիշ թուրք նախագահ կամ վարչապետ այդ նույն պատճառով երբևէ պիտի ծնրադրի Էփյաւտի ափին, Էրզրումի կիրճերում, Խարբերդի ձորերում և ներողություն պիտի խնդրի մարդկությունից՝ մեկուկես միլիոն հայերի ջարդի համար»։

Այս լեռնաշխարհը մեր լեռնաշխարհն է



Նկ 1



Նկ 2



Նկ 3



Նկ 4



Նկ 5



Նկ 6



Նկ. 7



Նկ 8



Նկ. 9

Արտակ Մովսիսյան

Հնագույն գրային մի համակարգ Հայաստանում

Դեռևս անցյալ դարում ծագեց ու մեծացավ հետաքրքրությունը Հայկական լեռնաշխարհի հնագույն արձանագրությունների նկատմամբ: Առաջին հերթին ուշադրության առարկա դարձան Վանի թագավորության (Ք.ա. 9—6 դդ.) սեպագիր արձանագրությունները, շնորհիվ՝ Մովսես Խորենացու տեղեկությունների և Արևմտյան Հայաստան եկած և քրդերի կողմից սպանված Ֆ. Ե. Շուլցի ուսումնասիրությունների հետմահու հրատարակության (1840 թ.): Այնուհետև հայտնի դարձան պատկերանշանագիր հուշարձաններ, որոնց մեջ մեծամասնություն էին կազմում ժողովրդի կողմից «հիծագրեր» անվանումը ստացած ժայռապատկերները: Ի տարբերություն վերջինների, պատկերանշանագիր հուշարձանների մեջ կար փոքրաթիվ, բայց չափազանց ուշագրավ մի խումբ: Եվ եթե ժայռապատկերներն իրենցից ներկայացնում էին գրի զարգացման նախափուլը և չէին տեղավորվում դասական իմաստով «գիր» հասկացության մեջ, ապա երկրորդ խմբի հուշարձանները թողնում էին որոշակի զարգացում ապրած գրով կանգնեցված արձանագրությունների տպավորություն: Այս խումբը ևս հստակորեն բաժանվում է երկու մասի՝ Վանի թագավորության մեհենագիր (հիերոգլիֆ) արձանագրությունների և լեռնաշխարհի զանազան վայրերից գտնված, գրեթե չուսումնասիրված նշանագիր հուշարձանների:

Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրությանը մենք անդրադարձել ենք առանձին մենագրությամբ, իսկ սույն հոդվածում քննության առարկա կդարձնենք նշված վերջին ենթախմբի հուշարձանները: Անցյալ դարավերջից մինչև օրս կուտակվել է այդ հուշարձաններին վերաբերվող հսկայական նյութ, որը, հասկանալի է, հնարավոր չէ լուսաբանել մեկ հոդվածով: Այստեղ խնդիր ենք դրել պարզելու միայն մի քանի հարց. արդյո՞ք նշված արձանագրությունները կապ ունեն միմյանց հետ՝ կազմելով մեկ համակարգ: Եթե այո՝ ի՞նչ բնութագրական առանձնահատկություններ ունի այն, ինչպիսի՞ աշխարհագրական ու ժամանակագրական ծավալ է ընդգրկում:

Նման հուշարձաններից առաջին երկուսը (որքան մեզ հայտնի է) հրատարակվեցին 1910 թ.՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի կողմից: Դրանք հայտնաբերվել էին Արաքս գետի աջ ափին գտնվող Ցոլակերտ բերդի մոտակայքում (նկ. 1): Երկրորդն Արմավիրի արձանագրությունն էր (նկ. 2): Ի տարբերություն նախորդի, որի թվագրումն անորոշ էր, վերջինս ուներ ժամանակագրական կարևոր մի փաստարկ. արձանագրություն կրող քարը շրջվել էր, որի վրա փորագրվել էր, ըստ մատենագետների, Ք.ա. 3-րդ—2-րդ դդ. թվագրվող հունարեն արձանագրություն: Հետևաբար, նշանագրերի քանդակման ժամանակը պետք է նախորդեր նշված դարերին. ավելին ճշգրտելու համար տվյալներ չկային:

Դեռևս անցյալ դարում հայտնի դարձան Թվարկվածներով չի սահմանափակվում Ք.ա. 3-րդ և 1-ին հազարամյակներով թվագրվող «առեղծվածային» նշաններ կրող հուշարձանների ցանկը: Առաջիկայում մենք մտադիր ենք ի մի բերելու և առանձին ուսումնասիրության առարկա դարձնելու մինչ օրս հայտնի բոլոր արձանագրությունները, որոնց թիվը (մեր ունեցած տվյալներով) շուրջ 300 է (այդ թվում հաշվի չեն առնված Հայաստանի վաղբրոնզեդարյան խեցեղեն նշանակիր անոթները, որոնց նշանները գիտնականների մի մասը հակված է համարելու զարդանախշեր, մյուսները՝ ոճավորված պատկերագրեր): Այստեղ նշենք, որ կենցաղային իրերից և դամբանաքարերից բացի, քննարկվող հուշարձանախմբում հանդիպում են նաև այլ բնույթի գրակիր առարկաներ, մասնավորապես, քարակոթողներ: Սույն հոդվածում կներկայացնենք դրանցից միայն մեկը, մյուսները թողնելով առաջիկայում նախատեսվող աշխատանքին:

Անցյալ դարում Ախալցխայի Ծուղրութ գյուղի բնակիչներից մեկը, տեղի կիսավեր եկեղեցու մերձակայքից (ձըմռան ցրտին «սրբաքարը ջերմացնելու համար») վերցրել և իր տուն էր տարել անհասկանալի նշաններ կրող մի քարակոթող, որը նրա որդիների և թոռների կողմից դասվել էր ընտանեկան սրբությունների շարքը: Տեղափոխվելով Երևան՝ նրա հաջորդներն իրենց հետ, այլ սրբությունների շարքում, բերել էին նաև «սրբաքարը»: Այդ քարն այժմ մասն է կազմում նույնպես ծուղրութեցի, ներկայումս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթի աշխատակից Արամ Վարդանյանի անձնական հավաքածուի, որն էլ այն տրամադրեց մեզ ուսումնասիրելու համար:

Քարը ուղղանկյուն, կամարաձև վերնամասով հնագույն կոթողի վերին բեկորն է (նման կոթողները շատ տարածված էին Արևելքում, նաև հնագույն Հայաստանում): Քարի պահպանված մասի վրա (նկ. 12) փորագրված են նշաններ, որոնց ուշադիր զննումն ու համեմատությունը վերոհիշյալ հուշարձանների հետ թույլ են տալիս քարակոթողը դասելու դրանց շարքը: Դժվար է այսօր որոշակի որևէ բան ասել կոթողի թվագրման մասին. կարծում ենք, որ հետագա ուսումնասիրությունները կարող են պատասխանել այդ և այլ շատ հարցերի:

Վերը հիշատակված նշանագիր հուշարձանների միջև, ինչպես նշվեց, առաջին հայացքից կան նկատելի ընդհանրություններ: Սակայն որպեսզի այդ տպավորությունը թվացյալ չլինի, հետևելով մոռացված գրերի ուսումնասիրման համաշխարհային փորձից բխող մեթոդիկային, կատարեցինք այս հուշարձանների հետազոտման ուղղությամբ առաջին անհրաժեշտ քայլերը: Նախ, ըստ հուշարձանների, կազմեցինք



Նկ 10



Նկ. 11



Նկ. 12

Այս արձանագրությունների ուսումնասիրության գործում կարևոր ներդրում ունեցավ Ի. Ի. Մեշչանինովը, որի «Անդրկովկասի առեղծվածային գրերը» (1930 թ.) և «Մերձսևծովյան ավազանի առեղծվածային գրերը» (1933 թ.) աշխատանքներում իմի բերվեցին մինչ այդ հայտնի հուշարձանները: Նրա աշխատանքներում առաջին անգամ հրատարակվեցին Ելենենդորֆի (Գանձակի մոտ) պեղումներից Ե. Իյոսլերի (1899—1901 թթ.) և Ց. Գումմելի (1930—31 թթ.) հայտնաբերած 4 առարկաների (նկ. 3) և Խոջալուի (ԼՂՀ) դամբարաններից մեկի երկու քարերի նշանները (նկ. 4): Երկու հնավայրի նյութերն էլ, ըստ Ի. Ի. Մեշչանինովի, թվագրվում են Ք.ա. 1-ին հազարամյակի սկզբով:

1940-ական թվականներից սկսած հրատարակվեցին մի շարք արձանագրություններ Ջավախքից (Բ. Ա. Կուֆտին, Օ. Մ. Ջափարիձե, Թ. Ն. Զուբինաշվիլի): Վերջիններս վկայված են ոչ միայն առանձին իրերի վրա (նկ. 5), այլև դամբարանների պատերին (նկ. 6) և թվագրվում էին Ք.ա. երրորդ հազարամյակով: Նույն ժամանակաշրջանով էին թվագրվում Ուրմիո լճի ավազանից հայտնաբերված խեցեղեն նշանակիր անոթները (նկ. 7), որոնք հայտնի դարձան 1966 թվականին (Զ. Բարնեյ):

Մեծամորի ժայռագիր 27 արձանագրությունները, որոնց մասին մամուլում տեղեկություններ էին հայտնվել դեռևս 1913 թ., ամբողջությամբ հրատարակվեցին միայն 60 տարի անց (Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Ե, 1973 գրքում): Ըստ որում, ժայռագիր արձանագրություններից բացի (նկ. 8) հրատարակվեց Ք.ա. 2-րդ—1-ին հազարամյակների սահմանագծով թվագրվող մշակութային շերտից հայտնաբերված կավե նշանագրված մի տախտակ (նկ. 9): Ժայռագիր նշանների վերաբերյալ գրքում մասնավորապես նշվում է. «...հատկանշական է նրանց զգալի մասի նմանությունը, և շուրջ 17 նշանի նույնությունը հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանվող նշանագրերի և Վանի թագավորության շրջանում սեպագրերի հետ զուգահեռ օգտագործված նշանագրերի հետ: Այս առումով Մեծամորի ժայռագրերը կարող են հատուկ ուսումնասիրության նյութ դառնալ» (էջ 163): Ցավոք, հիրավի մեծ կարևորություն ունեցող այս հուշարձանները ցայսօր չեն դարձել հանգամանալի ուսումնասիրության առարկա:

Խնդրո առարկա արձանագրությունների հավաքման վերջին փորձը (որքան մեզ հայտնի է) կատարվել է Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից՝ «Հայաստանի նախնադարյան նշանագրեր և նրանց ուրարտա-հայկական կրկնակները» (Ե., 1973 թ.) գրքում: Հեղինակն իմի էր բերել Ջավախքի, Ուրմիո լճի ավազանի, Ցոլակերտի և Արմավիրի վերոհիշյալ արձանագրությունները, որոնցից վերջին երկուսը թվագրվել են Ք.ա. 2-րդ հազ. վերջով և 1-ինի սկզբով: Նշված արձանագրությունը ժայռապատկերների հետ միասին Հ. Մարտիրոսյանը միավորում է մեկ ընդհանուր՝ «Նախնադարյան նշանագրեր» անունը կրող խմբում:

Չնայած այն բանին, որ վերջին տասնամյակներում հայտնաբերված նյութերը կարող էին նոր լույս սփռել քննարկվող արձանագրությունների հետազոտման հիմնախնդրի վրա, Հ. Ա. Մարտիրոսյանից հետո դրանց հավաքման և համակարգված ուսումնասիրության փորձ չի կատարվել: Խոսքը, մասնավորապես, Ապարանի ջրամբարի ափին, Քուչակ գյուղի մոտ գտնվող, Ք.ա. 18—14 դդ. թվագրվող հուշարձանի մասին է, որի 1986—87 թթ. պեղումներից (Ֆ. Մ. Մուրադյան) գտնվեցին շուրջ 5 տասնյակ արձանագրված քարեր (նկ. 10), որոնցից մի մասի վրա նշաններ էին արված 2 կամ 3 կողմից (ընդհանուր առմամբ՝ շուրջ 80 երես գրություն): Առաջին իսկ հայացքից ակնառու է Քուչակի արձանագրությունների կապը Խոջալուի և Ջավախքի դամբանաքարերի հետ, ըստ որում, վերջիններն ունեն ավելի արխայիկ բնույթ: Քուչակի նշանները նկատելի ընդհանրություն ունեն նաև Ելենենդորֆի, Ցոլակերտի, Արմավիրի, Ուրմիո լճի ավազանի և Մեծամորի վերոհիշյալ հուշարձանների նշանների հետ: Դրանցից մի քանիսի հետ տիպաբանորեն կապվում է նաև Ք.ա. 2—1 հազարամյակների սահմանով թվագրվող Այգեշատի հնավայրից գտնված կավամանների մեկի հատակին արված արձանագրությունը (նկ. 11, պեղվել է 1990 թ. Լ. Ն. Բիյագովի և Հ. Գ. Ավետիսյանի կողմից. նկարը մեզ տրամադրել է Հ. Գ. Ավետիսյանը):

Թվարկվածներով չի սահմանափակվում Ք.ա. 3-րդ և 1-ին հազարամյակներով թվագրվող «առեղծվածային» նշաններ կրող հուշարձանների ցանկը: Առաջիկայում մենք մտադիր ենք ի մի բերելու և առանձին ուսումնասիրության առարկա դարձնելու մինչ օրս հայտնի բոլոր արձանագրությունները, որոնց թիվը (մեր ունեցած տվյալներով) շուրջ 300 է (այդ թվում հաշվի չեն առնված Հայաստանի վաղբրոնզեդարյան խեցեղեն նշանակիր անոթները, որոնց նշանները գիտնականների մի մասը հակված է համարելու զարդանախշեր, մյուսները՝ ոճավորված պատկերագրեր): Այստեղ նշենք, որ կենցաղային իրերից և դամբանաքարերից բացի, քննարկվող հուշարձանախմբում հանդիպում են նաև այլ բնույթի գրակիր առարկաներ, մասնավորապես, քարակոթողներ: Սույն հոդվածում կներկայացնենք դրանցից միայն մեկը, մյուսները թողնելով առաջիկայում նախատեսվող աշխատանքին:

Անցյալ դարում Ախալցխայի Ծուղրութ գյուղի բնակիչներից մեկը, տեղի կիսավեր եկեղեցու մերձակայքից (ձըմռան ցրտին «սրբաքարը ջերմացնելու համար») վերցրել և իր տուն էր տարել անհասկանալի նշաններ կրող մի քարակոթող, որը նրա որդիների և թոռների կողմից դասվել էր ընտանեկան սրբությունների շարքը: Տեղափոխվելով Երևան՝ նրա հաջորդներն իրենց հետ, այլ սրբությունների շարքում, բերել էին նաև «սրբաքարը»: Այդ քարն այժմ մասն է կազմում նույնպես ծուղրութեցի, ներկայումս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթի աշխատակից Արամ Վարդանյանի անձնական հավաքածուի, որն էլ այն տրամադրեց մեզ ուսումնասիրելու համար:

Քարը ուղղանկյուն, կամարաձև վերնամասով հնագույն կոթողի վերին բեկորն է (նման կոթողները շատ տարածված էին Արևելքում, նաև հնագույն Հայաստանում): Քարի պահպանված մասի վրա (նկ. 12) փորագրված են նշաններ, որոնց ուշադիր զննումն ու համեմատությունը վերոհիշյալ հուշարձանների հետ թույլ են տալիս քարակոթողը դասելու դրանց շարքը: Դժվար է այսօր որոշակի որևէ բան ասել կոթողի թվագրման մասին. կարծում ենք, որ հետագա ուսումնասիրությունները կարող են պատասխանել այդ և այլ շատ հարցերի:

Վերը հիշատակված նշանագիր հուշարձանների միջև, ինչպես նշվեց, առաջին հայացքից կան նկատելի ընդհանրություններ: Սակայն որպեսզի այդ տպավորությունը թվացյալ չլինի, հետևելով մոռացված գրերի ուսումնասիրման համաշխարհային փորձից բխող մեթոդիկային, կատարեցինք այս հուշարձանների հետազոտման ուղղությամբ առաջին անհրաժեշտ քայլերը: Նախ, ըստ հուշարձանների, կազմեցինք նշանացանկեր և համեմատեցինք դրանք: Համադրության արդյունքները հաստատեցին մեր ունեցած առաջին տպավորությունը՝ ցույց տալով, որ այդ հուշարձաններին փորագրված են միևնույն համակարգի նշանագրերը: Այսինքն՝ մենք գործ ունենք նշանային մի համակարգի հետ, որը կիրառվել է Ք.ա. 3-րդ հազարամյակից սկսած մինչև 1-ինի սկիզբը: Այս համակարգի նշանների բնութագրական առանձնահատկությունն այն է, որ դրանք ոչ թե նկար-պատկերագրեր են, այլ վերջինների պարզեցված և զարգացում ապրած տարբերակները՝ գծային գրանշաններ, ինչն էլ հիմք տվեց համակարգը **Հայաստանի գծային գիր** կոչելուն: Գրերի զարգացման պատմությունից հայտնի օրինաչափությունները ցույց են տալիս, որ պատկերագրերը նկարային բնույթը կորցնում և գծային նշանների են վերածվում դարերի, երբեմն հազարամյակների զարգացման ու պարզեցման ընթացքում: Եգիպտական հիերոգլիֆներն, օրինակ, պատկերային տեսքով կիրառվում էին Ք.ա. 22-րդ դարից ի վեր (արագագիրը՝ Ք.ա. 30-րդ դարից), իսկ դրանց պարզեցված, գծային ձևերը՝ «դեմոտական գիրը», գործածության մեջ մտավ միայն Ք.ա. 8-րդ դարում: Ուստի միանգամայն իրավացի են այն հեղինակները, որոնք Հայկական լեռնաշխարհում գրի (գաղափարագրության) ծնունդը թվագրում են Ք.ա. 5-րդ հազարամյակով (մի եզրահանգում, որը հիմնավորվում է նաև ժայռապատկերների և այլ հնագիտական իրերի ուսումնասիրությամբ):

Հայաստանի գծային գրի ուսումնասիրության նախնական այս փուլում որոշակիորեն կարելի է խոսել նաև այս համակարգի բնիկ տեղական ծագման մասին: Վերջինս ակնհայտ է դեռևս Ք.ա. 8-րդ—7-րդ հազարամյակներից ծագող ժայռապատկերների և գծային նշանների համադրումից (աղ. 1):

Գծային գրի գործածությունը Հայկական լեռնաշխարհում (ըստ այսօրվա մեր ունեցած տվյալների) դադարում է Վանի թագավորության (բիայնական) տիրապետության տարածումով, որի արդյունքում Հայաստանում սեպագրին զուգահեռ կիրառվում են բիայնական մեհենագրերը: Վերջիններիս մեջ հստակ զանազանվում են 2 խումբ՝ գծային և նկարային: Առաջին խմբի սկզբնաղբյուրն, ըստ երևույթին, Հայաստանի գծային գրերն են, իսկ 2-րդի նկարային բնույթն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր Հայկական լեռնաշխարհի արևմուտքում կիրառված խեթա-լուվիկան հիերոգլիֆիկայի ազդեցությամբ: Գծային գրերի և բիայնական մեհենագրերի համադրումը (աղ. 2) վկայում է այդ 2 համակարգերի կապի մասին, ինչը թույլ է տալիս ժամանակագրական անընդհատության մեջ դիտարկելու նախաերվանդունյանց Հայաստանի գրավոր մշակույթի զարգացման պատմությունը:

Ամփոփելով մեր համառոտ ակնարկը՝ փորձենք արձանագրել այն եզրահանգումները, որ հնարավոր է անել խընդրի ուսումնասիրության այս նախնական փուլում.

ա) Ք.ա. 3-րդ հազ. մինչև Ք.ա. 1-ին հազ.-ի սկիզբը Հայկական լեռնաշխարհում կիրառվում է ուրույն մի համակարգ, որի բնիկ տեղական ծագումը կասկածից վեր է:

բ) Այդ համակարգը ձևավորվել է դեռևս Ք.ա. 5-րդ հազարամյակում ծնունդ առած գաղափարագրության հիմքի վրա, որի պարզեցման շնորհիվ էլ նրա նշաններն ունեն գծային տեսք:

գ) Հայաստանի գծային գրերը իրենց հերթին մասամբ հիմք են դառնում բիայնական մեհենագրության համար:

Ավելորդ չենք համարում նշել, որ թե ժայռապատկերներում առկա գաղափարանշանների, թե գծային գրերի և թե բիայնական մեհենագրերի նմանակները և կրկնակները հանդիպում են հայկական միջնադարյան մատյաններում հիշատակվող «Նախնեաց մերոց» նշանագրերի ցանկում: Դա իր հերթին ցույց է տալիս, որ գրավոր մշակույթը եղել է հոգևոր միասնության այն խորհրդանիշը, որն անկախ կրոնադավանական, քաղաքական և այլ հակասություններից, ուղեկից է եղել մեր ժողովրդին հազարամյակների ընթացքում, ժողովուրդ, որն այս լեռնաշխարհի հնաբնակն է ու ստեղծել է իր ուրույն մշակույթը, իր՝ սեփական քաղաքակրթությունը:



Աղ. I Աղ. II

Ահա գիշատիչների խորհուրդները

Թուրք նշանավոր ռասիստ, երիտթուրքերի կուսակցության պարագլուխներից մեկը՝ Աղա Գընդըզը գիշատիչ մոլուցքով գրել է.

«Պատերազմ գնալուց առաջ թող որ ես ձեզ ասեմ, թե ինչ եմ անելու. իմ վերցրած ամեն բուռ հողից արյուն պիտի ժայթքի, և իմ ճիրանների մեջ գարուններն աշունների և աշունները ձմեռների պիտի փոխվեն, եթե ես քարը քարի վրա թողնեմ՝ ապա թող իմ օջախը ավերակ դառնա, իմ սվինը վարդերով լեցուն պարտեզները գերեզմանի պիտի վերածի, և ես կկտակեմ պատմությանը այնպիսի ավերակներ, ուր տասը դար շարունակ քաղաքակրթություն չպիտի ծաղկի. գթությունը իմ սրի ծայրից կկախեմ, իրավունքը՝ հրացանիս բլթակից, և քաղաքակրթությունը՝ ձիուս ոտքերից: Եվ լեռնախորշերը, ավերակների այլանդակ պատկերները հավիտյան կասեն՝ «Թուրքն է անցել այստեղից»:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ «ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՆԵՐԸ»

Հայերի ցեղասպանության կազմակերպիչները նախապես մշակել էին իրենց համապատասխան «գաղափարախոսական հիմնավորումը», որով փորձեցին «արդարացնել» իրականացված հանցագործությունը:

Սրով և արյունով հիմնված օսմանյան կայսրությունը 20-րդ դարի սկզբներին կորցրել էր իր երբեմնի հզորությունը: Բացարձակ ակնհայտ դարձավ կայսրության տնտեսական հետամնացությունը զարգացած երկրների համեմատությամբ: Հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը սասանում էր բռնատիրական ռեժիմի հիմքերը:

Չնայած այն հանգամանքին, որ թուրքական տարրը օսմանյան կայսրության մեջ զբաղեցնում էր իշխող դիրք, այնուամենայնիվ, նա հետ էր մնում իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդներից: Նման պայմաններում արթնացող թուրքական ազգային ինքնագիտակցության ձևավորումը ծայրահեղ սուր, ագրեսիվ բնույթ էր կրում, որը զուգակցվում էր հոգեբանական այնպիսի գործոններով, որոնք դրսևորվում էին նվաճողական ձգտումներով և թշնամու կերպար ստեղծելու միտումներով:

Վերոհիշյալ միտումները իրենց արտացոլումը գտան թուրքական ազգայնամոլական տեսություններում: 1908—1914 թվականների ընթացքում սոցիալական-տնտեսական և քաղաքական-ռազմական անկում ապրող Թուրքիայում վերջնականապես ձևավորվեց պանիսլամիզմի և թուրքական նացիոնալիզմի գաղափարախոսությունը, որի ակունքները հասնում էին 19-րդ դարի 70-ական թվականները:

Օսմանյան ընդարձակ կայսրությունում մուսուլման ազգությունների (Ալբանիա, Մակեդոնիա, արաբական աշխարհ) պառակտման հետևանքով հօդս ցնդեց իսլամի միջոցով կայսրության իշխանությունը պահպանելու հույսը:

Թուրքական նացիոնալիզմը որպես իշխող գաղափարախոսություն՝ ստացավ նոր բնույթ:

Նոր գաղափարախոսությունը, որը հայտնի էր նաև որպես թուրանիզմ, քարոզում էր բոլոր ժողովուրդների մեկ ընդհանուր մշակույթ և քաղաքական մեկ հանրություն, մեկ ընդարձակ կայսրություն ստեղծելու անհրաժեշտությունը: Թուրքական ազգայնամոլության նախահայրը համարվում է Զիյա Գոքալպը, որը կոչ էր անում ստեղծել ազգային ժամանակակից նոր պետություն: Նրա այդ ծրագիրը իրականություն դարձրեց Քեմալ Աթաթուրքը:

1911 թվականի Սալոնիկում հրավիրած երիտասարդ թուրքերի կուսակցության համագումարը որոշում ընդունեց կայսրության տարածքում գոյություն ունեցող տարակարգ բնակչության համընդհանուր թուրքացման մասին: Համագումարի խորհրդանիշը դարձավ «Թուրքիան միայն թուրքերի համար է» բանաձևը:

Փաստորեն անհնար էր դառնում ազգային փոքրամասնությունների գոյությունը կայսրությունում:

Բացառելով հայերին թուրք ազգությունից, Գոքալպը ընդգծեց բացառում էր նաև բարոյական արժեքներից, հայերին դիտելով որպես օտար տարրի, հող նախապատրաստելով նրանց ոչնչացման համար:

Գոքալպը, Թալեաթը, Էնվերը և մյուս թուրք ազգայնամոլները հայերին համարելով որպես թուրքերին թշնամի մի ժողովուրդ, առաջ քաշեցին «թշնամի ազգի», «հայկական սպառնալիքի» և հայերի ընկատմամբ անվստահության գաղափարը:

Փաստորեն, մինչև հայերի զանգվածային ջարդերի կազմակերպումը, Թուրքիայում արդեն գոյություն ունեին այն բոլոր գործոնները, որոնք վընասակար նշանակություն ունեցան հայոց ցեղասպանության համար:

Հայերի ազատագրական շարժումը հանուն անկախության և սեփական պետականության ստեղծման, թուրք ընշանավոր ազգայնամոլ գաղափարախոս դոկտոր Նազիմը համարում էր թուրանական ծրագրի վրա դրվող «գերեզմանաքար»: Այդ պատճառով էլ նա առաջարկում էր «Հայկական հարցի» լուծումը՝ հայերին ամբողջ կայսրության տարածքում ոչնչացնելու ճանապարհով: «Նման առաջարկը,— ասում էր նա,— կարող է թվալ անխիղճ, անմարդկային...: Մենք պետք է կամ համաձայնվենք հայերի արմատական բնաջնջման ծրագրի հետ, ապահովելով մեր ներկան և ապագան, կամ հրաժարվենք այդ ծրագրից և մնանք ներկա դրության մեջ...»:

Այսպիսով հայերի ցեղասպանության հանցագործ մտահղացումը արդեն կար, մընում էր ընտրել հարմար ժամանակ այն իրագործելու համար:

Այդպիսի առիթ ստեղծեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Թուրք բանաստեղծ Ահմեդ Էմինը, հանդես գալով մամուլում, կոչ արեց թուրք զինվորներին, պատվիրելով նրանց, որ «ամեն մի զինվոր պետք է վերադառնա բարբարոսության շրջանին, արյուն տենչա, անխնա լինի, սպանելով մանուկներին, կանանց, ծերերին և հիվանդներին, նկատի չառնի ուրիշների ունեցվածքը, կյանքը, պատիվը: Մեզանից հետո թողնենք արյուն, տառապանք, անարդարություն, սուգ՝ միայն այսպես մենք կշահենք քաղաքակիրթ աշխարհի համակրանքը»: Թուրքերը շտապեցին իրականացնել իրենց իսկ կայացրած որոշումը. «Չեն լինի հայերը, չի լինի և Հայկական հարցը»: Նրանք հայերին սպանում էին առանց տարբերակման, միմիայն այն բանի համար, որ նրանք հայ են:

«Բոլոր դեպքերում հայերի հարցը կարելի է շտապ լուծել՝ բոլորին կոտորելով...: Թուրքերի մի շարք վատ սովորությունները բնատուր են և գալիս են անցյալի վնասակար բնազդից: Մենք յուրայինների հանդեպ ևս գթություն ցուցաբերելու հատկություն չունենք: Թուրքերը ոչ միայն հայերի կամ ուրիշների, այլ միմյանց նկատմամբ էլ դաժանություն են ցուցաբերում»:

Ջելալ ՆՈՒՐԻ
1915 թ.

«Հայերը մեր երկրում տեղ չունեն և անմտություն կլինի մեր կողմից պատերազմի ընձեռած հնարավորությունից չօգտվելը»:

ՔԵՄԱԼ ՓԱՇԱ
Թուրքիայի ռազմածովային ուժերի նախարար

ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ

«Վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների օսմանականացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է իրականացվի զենքի ուժով»:

Սալոնիկ, 1911 թ. հոկտեմբեր

(Իթթիհատականների համագումարի որոշումից)

ԱԴՈԼՖ ՀԻՏԼԵՐ. 1939-ի ՕԳՈՍՏՈՍԻ 22

«...Մեր ուժը արագության և դաժանության մեջ է: Չինգիզ խանը միլիոնավոր կանանց ու երեխաների կոտորեց կանխամտածված կերպով ու թեթև սրտով: Պատմությունը նրանում տեսնում է սոսկ պետության հիմնադրի: Ինձ համար նշանակություն չունի, թե ինչ կասի իմ մասին խղճուկ արևմտաեվրոպական քաղաքակրթությունը: Ես հրամայել եմ, որպեսզի մեր պատերազմական նպատակը չլինի սոսկ որոշակի սահմանների նվաճելը, այլ թշնամու ֆիզիկական ոչնչացումը: Եվ ցանկացած մեկը, որ քննադատական որևէ խոսք կարտասանի, կգընդակահարվի պատժիչ ջոկատի միջոցով: Այսպես, կազմ ու պատրաստ վիճակում են մահվան ջոկատները, առայժմ միայն արևելքում, որոնց հրամայված է առանց խղճահարության սպանել լեհական ծագման ու լեհերեն խոսող տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այսպես մենք կկարողանանք ձեռք բերել մեզ անհրաժեշտ հողային կենսատարածությունը:

Վերջ ի վերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը»:

Ա. ՀԻՏԼԵՐԻ 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբերգում Գերմանիայի գերագույն հրամանատարներին ու գեներալներին ուղղված ճառից

Տարեգրություն

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

1990

— Ապրիլի 17—21-ը Երևանում կայացավ միջազգային գիտական նստաշրջան «Հայերի ցեղասպանություն, պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» թեմայով, նվիրված հայերի ցեղասպանության 75-րդ ամյակին:

— Ապրիլի 19-ին Կիպրոսի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

1995

— Ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետական դուման ընդունեց հայտարարություն «1915—1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»:

— Ապրիլի 21—23-ը Երևանում տեղի ունեցավ Մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով՝ «Հայոց ցեղասպանությունը» թեմայով:

1996

— Ապրիլի 23-ին Կանադայի համայնքների պալատը քննարկեց «Մարդու կողմից մերձավորին ցույց տրվող անմարդկային վերաբերմունքի մասին» հարցը:

Առաջարկություն ներկայացվեց հայերի 1915 թ. ցեղասպանության 81-րդ տարեդարձի կապակցությամբ սահմանել և յուրաքանչյուր տարի ապրիլի 20-ից 24-ը նշել մարդու կողմից իր մերձավորի նկատմամբ թույլատրված հանցագործության հիշողության շաբաթ:

— Ապրիլի 25-ին Հունաստանի խորհրդարանը օրենք ընդունեց ապրիլի 24-ը որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշողության օր սահմանելու մասին.

— Նոյեմբերի 6-ին Իտալիայի խորհրդարանում հրավիրվեց գիտաժողով և կլոր սեղան՝ նվիրված հայոց ցեղասպանության հարցերին:

1997

— Ապրիլի 8-ին ԱՄՆ-ի կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչը և Դեյվիդ Բանիերը կոնգրեսին ներկայացրեցին օրենսդրական նախագիծ, կոչ անելով կոնգրեսին՝ հատուկ բանաձև ընդունել հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին:

— Ապրիլի 22-ին ԱՄՆ-ի Սենատի հայկական համախմբման դահլիճում նշվեց հայոց Մեծ եղեռնի 82-րդ տարեդարձը, որը կազմակերպել էր սենատոր Ջեկ Ռիդի, կոնգրեսականներ Ջո Նոլենբերգի, Մարտին Նիհրնի, Դեյվիդ Բանիերի և Ջորջ Ռադանովիչի մասնակցությամբ ստեղծված հանձնախումբը:

— Ապրիլի 17-ին Նոր Հարավային Ուելսի (Ավստրալիայի) խորհրդարանի օրենսդիր հանձնաժողովը որոշում կայացրեց ապրիլի 24-ը սահմանել հայերի ցեղասպանության հիշատակի օր և առաջարկություն ներկայացվեց Ավստրալիայի դաշնային կառավարությանը՝ ընդունել նույնանման որոշում:

— Մայիսի 3-ին Լիբանանի Հանրապետության խորհրդարանը նկատի ունենալով, որ ամեն տարվա ապրիլի 24-ը առիթ է ոգեկոչելու հայ ժողովրդի դեմ կատարված ջարդերի արհավիրքի հիշատակը, բանաձև ընդունեց ամեն տարի այդ օրը հայ ժողովրդի հետ միասնականության օր հայտարարելու մասին:

1998

Բելգիայի խորհրդարանը, քննարկելով հայերի ցեղասպանության հարցը, որոշեց.

Ճանաչել 1915 թվականին հայերի ցեղասպանությունը և դիմել Թուրքիայի կառավարությանը՝ կոչ անելով ընդունել հայերի ցեղասպանության փաստը:

Արմին Վեգներ.

«ԵՍ ՏԵՍԵԼ ԵՄ ՍԵՓԱԿԱՆ ԱՉՔԵՐՈՎ»

1919 թվականի հունվար, Բեռլին

Պարոն նախագահ.

Ձեր ականջները չփակեք, երբ մի անծանոթ խոսում է Ձեզ հետ: Անցած տարվա հունվարի 8-ին Ձեր դեսպանությունում կոնգրեսին հղած Ձեր ուղերձում առաջ քաշեցիք Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների ազատագրության պահանջը: Անտարակույս, նրանց թվին է պատկանում նաև հայ ժողովուրդը: Դա այն ազգն է, որին ես պաշտպան եմ կանգնում:

Որպես մեկը սակավաթիվ այն եվրոպացիներից, որոնք սկզբից ևեթ ականատես են եղել Անատոլիայի ծաղկուն քաղաքներում, բերքաշատ դաշտերում նրա (հայ ժողովրդի— Ս. Ս.) զարհուրելի բնաջնջմանը և Եփրատի ափերին, Միջագետքի անապատի քարքարոտ ավազուտներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը, ես համարձակվում եմ Ձեզ ներկայացնել թշվառության ու սարսափների այն պատկերները, որոնք տեսել եմ իմ սեփական աչքերով շուրջ երկու տարվա ընթացքում, որոնք երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից:

Հայ ժողովուրդը չմասնակցեց աշխարհամարտին, նրան այդպիսի հնարավորություն չընձեռվեց: Նա դարձավ այդ պատերազմի զոհը: Երբ թուրքական կառավարությունը 1915 թվականի գարնանը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերին երկրի երեսից բնաջնջելու իր հրեշավոր ծրագրի իրագործմանը, Ֆրանսիայում, Անգլիայում և Գերմանիայում նրանց եվրոպական ընկերակիցների ձեռքերը շաղախված էին սեփական չարաբախտ արյունով, որը հեղում էին իրենց անընմբռնելի ցավոտ կուրությամբ, և ոչ ոք չխանգարեց Թուրքիայի խավարամիտ տիրակալներին՝ իրականացնելու այն տանջալից խոշտանգումները, որոնք կարող են համեմատվել միայն խելագար հանցագործի գործողություններին: Այդպես նրանք մի ամբողջ ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ծերուկների և երեխաների, հղի մայրերի ու ծծկեր մանուկների քշեցին արաբական անապատները միայն մի նպատակով՝ սովամահության մատնել բոլորին:

Իրենց հարազատ բնակավայրերից, որտեղ հայերն ապրել են երկու հազար տարուց ավելի, կայսրության բոլոր կողմերից՝ լեռնային շրջանների ժայռոտ կիրճերից մինչև Մարմարի ծովի ափերն ու հարավի արմավենիների օազիսները, նրանք քշվեցին այդ անմարդաբնակ անապատները:

Արդարացնել դա՝ իբր ընբրանց նոր բնակավայրեր տրամադրելու անհրաժեշտությամբ, առնվազն ծաղր է մարդկային զգացմունքների հանդեպ: Իրականում տղամարդկանց կոտորում էին զանգվածաբար, խմբերով կապկպում էին միմյանց շղթաներով կամ պարաններով և գցում էին գետը կամ նետում ժայռերից: Կանանց ու երեխաներին վանառում էին հրապարակային աճուրդներում, ծերերին ու դեռահասներին մահակների մահացու հարվածներով քշում էին հարկադիր աշխատանքների: Սակայն դրանով չէին բավարարվում: Իրենց կեղտոտ ձեռքերով զրկելով հայությանը իր առաջնորդներից ու ներկայացուցիչներից, օրվա յուրաքանչյուր ժամ ուղղակի անկողնուց հանելով կիսամերկ մարդկանց քշում էին մահվան ճամբարներ, թալանում էին նրանց տները, կրակի մատնում բնակավայրերը, ավերում էին եկեղեցիները՝ վերածելով դրանք մզկիթների, բռնագրավում էին անասունները ու սայլերը, տանջահար մարդկանց ձեռքից խլում էին հացի վերջին փշրանքները, նրանց վրայից հանում էին հագուստը, վայրենաբար պոկում ու յուրացնում էին նրանց թանկարժեք զարդարանքները: Թուրք պաշտոնյաները, սպաները, զինվորները, քոչվորները միմյանց հետ մրցում էին արյունռուշտ խրախճանքներում իրենց անասնական կրքերին հագուրդ տալու համար: Վրաններից բռնությամբ դուրս էին բերում որբ աղջիկներին, մահակներով ծեծում էին հղի կանանց ու մահամերձներին, որոնք հագիվհազ քարշ էին տալիս ոտքերը, մինչև որ ընկնում էին անշնչացած, ճանապարհի փոշին վերածելով արնաշաղախ զանգվածի: Այդ ճանապարհներով անցնող ուղևորները իրենց սարսափահար աչքերը շրջում էին դիվային դաժանությամբ քշվող մարդկային զանգվածից, նրանք իրենց հայացքները շրջում էին ահավոր տեսարաններից, շրջվում էին, որպեսզի չտեսնեն սպանված նորածիններից գոյացած բլուրները և ճանապարհներին մանուկների կտրատված ձեռքերը, որոնք կարծես մեկնվել էին իրենց դահիճներին:

Հայերի քարավանները, որոնք իրենց հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից տեղահանվելու առաջին օրերին բաղկացած էին հազարավոր մարդկանցից, Հալեպի շրջակայքը հասնելու պահին մնացել էին ընդամենը մի քանի հարյուր մարդկանցով: Այդ իրողության բացատրությունը պարզ է: Դաշտերը ծածկված էին սևացած, ուռած, գարշահոտությամբ օդը թունավորող դիակներով, մերկ ու բռնաբարված մարմիններով: Թուրք ժանդարմները տեղահանված հայերից շատերին զույգ-զույգ կապելով նետում էին Եփրատ՝ ի կեր ձկներին:

(Հատվածներ Արմին Վեգների Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնին հղված նամակից):



Հայերի ցեղասպանությունը թուրքական իշխանությունների ծրագրած ու հետևողականորեն իրագործվող քաղաքականություն է: Թեև աշխարհը հիշում է 1915-ը, բայց նույն ձեռագրով ու նույն թուրքաբարո դաժանությամբ կիրառվեցին ջարդերը Սումգայիթում ու Բաքվում: Ժողովուրդը չի մոռանում, ժողովուրդը պատմությունից դասեր է քաղում:

Լուսանկարներում.— 1. Սումգայիթի զոհերի հիշատակին նվիրված հանրահավաք:

2. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի սրահներից մեկը:



ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՎԱՎԵՐԱԳՐԵՐ, ԱՍՈՒՅԹՆԵՐ...

Համաշխարհային հանրությունը դատապարտում է ցեղասպանությունը



«Վիկտոր Համբարձումյանը ամենից առաջ նոր մտածողություն է աստղաֆիզիկայում: Այս տեսակետից առանձնահատուկ տեղ է գրավում աստղասփյուռների հայտնագործումը:

Աստղասփյուռները Վիկտոր Համբարձումյանի գիտական սխրանքն ու պսակը դառնալու հետ մեկտեղ, բերեցին նաև համբավ Բյուրականին և փառք մեր ժողովրդին: Իր անցյալի հոյակապ մշակույթով, համամարդկային արժեքներ ներկայացնող ինքնուրույն ձեռքբերումներով աշխարհին արդեն հայտնի ժողովուրդը ճանաչվեց ահա այդ չափանիշով նաև՝ քսաներորդ դարին բնորոշ գիտական համարձակ մտածողությամբ, դարագլուխ սկսող հայտնագործություններ անելու անվիճելի կարողությամբ»:

Գրիգոր ԳՈՒՐԶԱԴՅԱՆ
Ակադեմիկոս

Սեղանին վառվում էր մոմը...

Ամեն մի ժողովուրդ ունի իր Կրեմլը, իր Լուվրը, իր Բուրգերի հովիտը: Հայաստանում դա Մատենադարանն է: Այնտեղ մտնում ես՝ ինչպես համերգասրահ:

Սկզբում նվագախումբը լարում է գործիքները, բազմաձայն աղմկոտ է Երևանը: Վեր ես բարձրանում վարդագույն շենքերով պարսպապատված փողոցով դեպի բարձունքը. հնչյունները մեկը մյուսի ետևից լռում են: Մնում են ճնճղուկների խլացուցիչ ճրվողյունը և մեկ էլ՝ մանուկների գիլ կանչերը հարթ ու անվերջանալի աստիճաններին:

Սա հնչում է որպես երաժշտական առաջին թեմա: Եվ դրա հետ, դրան զուգահեռ, յուրաքանչյուր քայլի հետ դեպի վեր՝ ծնվում է, ուժգնանում Մատենադարանի հանդիսավոր մեղեդին:

Մատենադարանը վեհաշքանչ մոտենում է, աճում որպես ամրոց, որպես հուշարձան: Լեռան պաստառին նրա ճակատը նման է հին ձեռագրի սկզբնաէջ խորանի, մեկը այնտեղ պահվող հազարավոր խորաններից:

Մատենադարանը հին հայերենում նշանակել է մատյանների պահոց, գրադարան, գրապահոց:

Այստեղ տասնվեց հազար ձեռագիր մատյան և պատառիկ կա, փոքրից՝ տասնհինգ գրամանոցից, մինչև ամենամեծը՝ երկփթանոց մագաղաթյա հսկան: Ամենահին թերթիկները պահպանվել են V դարից, հնագույն մանրանկարներն ստեղծվել են VI դարում՝ Իուսիայի մկրտությունից առաջ, Անգլիան նորմանների նվաճելուց առաջ:

Մատենադարանում պահպանվում են հին աշխարհի մտածողների շատ երկեր, որոնց բնագրերը կորսված են, և դրանք այսօր սկզբնաղբյուրի իրավունք են ձեռք բերել: Էվկլիդեսի երկրաչափությունը հայերեն ավելի վաղ է թարգմանվել, քան լատիներեն, և այն էլ ոչ թե արաբերենից, այլ հունարեն բնագրերից:

Մատենադարանի ձեռագրերում կան փիլիսոփայության և իրավունքի, մաթեմատիկայի և աշխարհագրության վերաբերյալ մատյաններ: Գիտական երկերը պարունակում են ապագա հայտնագործությունների հունդեր: Բանաստեղծությունները և միջնադարյան զրույցները ապշեցնում են թարմությամբ և Վերածննդի կենսասիրությամբ: Հին հայկական մանրանկարները փայլում են ոսկով, որդան կարմիրով, լաջվարդով. դրանք նման են թանկարժեք ջնարակի:

Ահա քարացած մի մատյան, որ հայտնաբերվել է քարանձավում: Կրաջրերը դարերով լվացել են ձեռագիրը, բայց չեն կարողացել ջնջել թանաքը, տառերն ասես փորագրված են քարի վրա:

...Հինգերորդ դարի շեմին մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը՝ 36 գիր: Մեսրոպ Մաշտոցի և նրա գինակիցների ջանքերով հիմնադրվող հայկական դպրոցներին զուգահեռ ստեղծվում էին գրապահոցներ՝ մատենադարաններ, աշակերտները սերմերի նման ստիպվում էին ամբողջ երկրով, գրառվում էր Հայաստանի՝ նրա թագավորների և գիտնականների, նրա մղած պատերազմների ու մեծության, ծանր ժամանակներում նրա ցուցաբերած արիության և աննկունության պատմությունը՝ և այս ամենի մեջ կար ինչ-որ փութկոտություն, վերահաս իրադարձությունների կոահում, մատյաններում ժողովրդի հիշողությունը, ազգությունը և լեզուն առարկայացնելու ձգտում:

Դա հիշեցնում էր գարունը անապատում, երբ մի քանի օրում շուրջն ամեն ինչ կանաչում է, ծածկվում վառ ծաղիկներով: Բնությունը շտապում է անցնել ծաղկից պտղատուղ դառնալու ուղին: Ծաղկոցին փոխարինելու է գալիս ամառն տոթը, չար խորշակները մոխրացնում են հանկարծակի ստեղծված կանաչ գորգը, միայն փութկոտ թափված սերմերն են պահպանվում մինչև հաջորդ բարենպաստ պահը, որպեսզի նորից ծաղկում ապրեն:

Հայերի ու հայ ձեռագրերի պատմությունը որքա՞ն նման է բնության այս բնականոն շրջապտույտին: Այն տարբերությամբ, որ ամռան և աշնան սառնամանիքներին բնության մեջ պարտադրաբար փոխարինելու է գալիս գարնանային ծաղկոցը, իսկ Հայաստանում ծաղկափթթումը տրորվում էր բազում դարեր:

Երբ գալիս էին թշնամիները, գրիչը՝ ձեռագրեր ընդօրինակողը, շալակն առած մագաղաթյա ծանր թերթերի կապոցը, թանաքը, ներկերը և ընդօրինակման մատյանը գընում էր ժողովրդի ետևից: Եվ որտեղ էլ որ նա դադար առներ, շարունակում էր ընդօրինակման իր աշխատանքը:

Բազմաթիվ մատյանների թերթեր այրվել են հրդեհներից, ջրվել արյունով, իսկ հիշատակարանները պատմում են պատերազմների, ոսոխի գիշերային հարձակումների, քոչվորների խարույկների, գաղթի ճամփաների, մարդկանց կորստյան, գրիչների աշխատանքի մասին, ովքեր հիսուն, վաթսուն տարի անընդմեջ «զօր ու գիշեր» ձեռագրեր են արտագրել և հարազատ աղջիկների նման թաքցրել թշնամուց:

Այսպես է ծնվել հայկական ձեռագիր մատյանը. բացառիկ մի երևույթ համաշխարհային մշակույթում, ոչ միայն իր հնության և հարուստ բովանդակության առումով, այլև այն սնելով. որ զբաղեցրել է ժողովրդի կյանքում, այն դերով, որ խաղացել է նրա պատմության մեջ:

Ծագման պահից իսկ մատյանը եղել է ոչ թե պարզապես տեղեկությունների մի հանրագումար՝ գրված մագաղաթի թերթերի վրա, ոչ միայն գրագիտության, մշակույթի տարածման միջոց, այլ եղել է սուր, որով ժողովուրդը պայքարել է հանուն իր ազատության և ազգապահպանության:

Կիմ ԲԱԿՇԻ
«Արծիվ և սուր» գրքից

Եղեռնից վերապրողը.
Գործ՝ Բյուզանդ ԿՈՃԱՄԱՆՅԱՆԻ

ՀԱԼԵՊԻ ՀԱՅՈՑ ԳԵՂԱՐՎԵՍՏԸ

Արվեստագետ Մանյա Ղազարյանը, իր որդու՝ Աշոտ Ստեփանյանի հետ շատ շնորհակալ գործ են կատարել՝ հատուկ ուսումնասիրության թեմա դարձնելով հայ սփյուռքի ինքնատիպ մշակույթի այս օջախը: Եվ նշելով սույն աշխատության կարևորությունը, համոզված ենք, որ արտահայտում ենք շատ շատերի մասնագիտական կարծիքը:

Թերթում ես գիրքը և աչքերիդ առաջ հառնում է գեղեցիկ արվեստի զարմանալի և ուրույն մի աշխարհ՝ ոսկերչություն, ակնագործություն, խեցեգործություն, փայտի գեղարվեստական մշակում, ասեղնագործություն, գորգագործություն... Այստեղ Հալեպի հայության կիրառական արվեստի լայն ներկայացնակն է և իհարկե՝ գեղանկարչական ստեղծագործություններ, որոնց հեղինակները ներկայացված են երեք խմբով: Հունական սրբապատկերներ, անհայտ հայ նկարիչների ստեղծագործություններ, որոնք ապրել են Հալեպում կամ հայկական տարբեր կենտրոններում, և նրանց գործերը տարբեր ճանապարհներով հայտնվել են այստեղ: Դրանց մեջ եզակի չեն նաև արվեստի գլուխգործոցները, և դրանց հեղինակները անպայման իրենց արժանի տեղն են զբաղեցնելու հայ նկարիչների համաստեղության մեջ:

ԺԷ—ԺԹ դարերում Հալեպում ստեղծագործել են նկարիչներ Տեր Մկրտիչ քահանան, Բարսեղ Կեսարացին, Ներսեսի որդի Հակոբը և ուրիշ վարպետներ:

Հետաքրքիր տեղեկություններ կան նկարիչների կյանքից: Գրքի հեղինակները մեզ պատմում են նոր Ջուղայի եկեղեցիները և մեծահարուստների ապարանքները նկարազարդած գեղանկարիչ Մինասի մասին, որը միաժամանակ քաջատեղյակ էր բժշկությանն ու դեղագործությանը:

Առանձին թեմա է Դեյր էլ Զորի մեծ եղեռնին նվիրված հուշարձանի պատմամշակութային անդրադարձների բնութագրումն ու լուսաբանումը:

«Հալեպի հայոց գեղարվեստը» գիրքը փաստացի ահռելի նյութ է պարունակում, քանի որ խտացված է և, բնականաբար, լրիվ չի բացված: Եվ պետք է, որ մեր արվեստագետները շարունակեն այդ գործը՝ ելակետ ունենալով Մանյա Ղազարյանի ուղեցույց հանդիսացող գիրքը: Դա նաև երախտիքի տուրք կլինի արվեստի ժրաջան մշակ, արվեստագիտության դոկտոր Մանյա Ղազարյանի հիշատակին, որի կյանքը անմնացորդ նվիրում էր հայ արվեստին ու մշակույթին:

Կարինե ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԱՐԱՐԱՏԸ

Արարատը մշտապես առկա է հայոց լեզվում, հայի հիշողության, հայ քերթության մեջ, հայ կյանքում: Բայց և այսօրվա հայկական պետության սահմանների մեջ չէ. գրտնըվում է գերության մեջ:

Իր ոտքերին մնացել է նրա ամենօրյա վերքը:

Որպեսզի մենք ևս հասկանանք, թե ի՞նչ է նշանակում հայի համար Արարատի ամենօրյա վերքը, վերցնենք մի օրինակ. պատկերացնենք, որ մեր սահմանները գծում ենք Ակրոպոլիսի փեշերին, նրա շուրջը, այնպես, որ ամբողջ Աթենքը դառնա մի ամֆիթատրոն, շրջված դեպի Պարթենոնը, բայց տաճարը, արձանները և մնացած բոլորը, ինչպես ասում էր Մակրիյանիսը, լինի թուրքերի ձեռքում, դրանից այն կողմ ամեն ինչը թուրքական լինի, իսկ մենք լինենք ամֆիթատրոնում և դիտենք այդ տեսարանը... Մոտավորապես վիճակն այստեղ այդպիսին է: Հայը, բացելով իր դուռը, դիմացը տեսնում է Արարատը: Տեսնում է և իսկույն մի նզովք է շարտում դեպի այնտեղ, որտեղ պետք է շարտել. նզովք նրանց, ովքեր գերության մեջ են պահում այն. նրանց, ովքեր նպաստեցին դրան. նրանց, ովքեր անտարբեր և անհոգ գտնվեցին. մի խոսքով՝ շատ-շատերին: Պատմությունը երկար է: Այսպես է նա սկսում իր օրը՝ նզովելով պատասխանատուներին և ողջունելով լեռը: Այս գայթակղությունը մեծ է: Որովհետև տեսարանը ևս եզակի է: Ընդհանրապես, բոլորս մեր լեռների մասին ասում ենք՝ «ամենագեղեցիկը աշխարհում»: Ամեն մեկն իր լեռան մասին: Սակայն այստեղ այցելող օտարազգին ևս պարտավորվում է խոստովանել, որ Արարատը իրոք աշխարհի ամենագեղեցիկ լեռն է: Դա ինչ-որ անմոռանալի բան է: Այստեղ մարդ սոսկ մի սարալանջ կամ բարձր լեռնագագաթ չէ, որ տեսնում է: Նա տեսնում է լեռն ամբողջությամբ, ստորոտից մինչև բարձրաբերձ գագաթը, հինգ հազար երկու հարյուր մետր: Ամեն առավոտ հայն այս ամենը տեսնում է շարքում. իր Պարթենոնը,Էրեքթեյոնը, պարիսպները, արձանները: Եզակի մի համալնապատկեր, բոլոր գերիները շարված: Փոքր Մասիսը՝ մի կատրյալ կոն ձախ ծայրում, մոտավորապես չորս հազար մետր բարձրությամբ, որի վրա այժմ, ամռանը, ձյունը իր բարակ և երկար երիզներով հյուսքեր է կապել ամենագեղեցիկ լեռնային գլխի շուրջը, որպիսին երբէք կարող է մարդ երևակայել. եզակի և անմոռանալի: Ճիշտ կողքին՝ Ագատ Մասիսի հսկա զանգվածը, մեծ գագաթը: Այն հավերժապես ամպերի մեջ է, ձյունասպիտակ ամպերի: Պետք է շատ բախտավոր լինես, պատահես պայծառ օրվա, որպեսզի տեսնես, թե մինչև ո՞ւր է հասնում և ինչպե՞ս է գծագրվում կապույտ երկնքում հսկայական լեռնադաշտի նմանվող նրա զանգվածեղ գմբեթը: Դա բոլորովին էլ հեշտ բան չէ: Երբ Նիկոլայ ցարը այս հողերը գրավել էր պարսիկներից և կցել իր կայսրությանը, ժամերով կանգնել է լեռան դիմաց, բայց մինչև վերջ էլ չի կարողացել տեսնել Արարատի գագաթը: «Դե՛ հանիր, վերջապես, քո գդակը և խոնարհվիր քո տիրոջ առաջ», գոռացել է ցարը: Բայց մեկնել է ձեռնունայն:

Միցոս ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈՒԼՈՍ
«Հայերը» գրքից

«Ես նայում եմ գանձին, գանձը՝ ինձ»...

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, որը երևելի հնագետ, պատմաբան, արևելագետ-արվեստաբան էր, 1934 թ. հրավիրվել էր Սանկտ Պետերբուրգ՝ որպես Էրմիտաժի տնօրեն: Էրմիտաժը աշխարհի հռչակավոր թանգարաններից էր, որը տեղ էր գտնում Լոնդոնի և Փարիզի պատմամշակութային թանգարանների շարքում:

Ինձ, իբրև Հ. Օրբելու ասպիրանտի, հայտնի էր, թե նա ողբաց էր սիրում Էրմիտաժը և որչափ էր կապված նրա հետ, ուստի և շատ ծանր տարավ, երբ այդ պաշտոնից ընրան ազատեցին:

Արդեն երրորդ տարին էր, ինչ սկսվել էին Գառնիի պեղումները և մտածելով, որ լավ կլիներ Օրբելուն կտրել Լենինգրադից, դիմեցի մեր ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանին՝ խնդրելով որ նրան Հայաստան հրավիրեն և հանձնարարեն Գառնիի հնագիտական արշավախմբի ղեկավարությունը, մանավանդ, նա քանիցս եղել էր Գառնիում, սիրում էր Գառնին և շփվելով երիտասարդ աշխատակիցների հետ, կարող էր մասամբ մոռացության տալ իր ապրումները: Համաձայնվելով այդ առաջարկին, Համբարձումյանը պատշաճ համարեց ակադ. Հ. Օրբելուն հրավիրել իբրև Գառնիի արշավախմբի խորհրդատու:

Արշավախումբն արդեն Գառնիում էր, երբ 1951 թ. սեպտեմբերի 28-ին Գառնի ժամանեց Օրբելին իր հավատարիմ աշխատակից՝ միութենական ակադեմիայի թղթակից անդամ Կամիլա Վասիլևնա Տրեվերի հետ:

Ամեն օր, առավոտյան Օրբելին և Տրեվերը գալիս էին ամրոց: Օրբելին հետևում էր պեղումներին, ուրախանում էր, երբ մի բան էր բացվում, կամ հայտնաբերվում, զրուցում էր աշխատակիցների հետ, խորհուրդներ էր տալիս, հետաքրքրվում էր հեթանոսական տաճարի ավերակներով:

Հ. Օրբելին դեռևս 1946 թ. Անդրկովկասի հնագետների Երևանում գումարված հավաքում հարց բարձրացրեց Գառնիի տաճարի վերականգնման մասին: Ծանոթանալով 1931 թվականին Ն. Բունիաթյանի ձեռնարկած փորձին, նա գըտավ, որ թույլ են տրվել սխալներ, ուստի հարկավոր է կազմել տաճարի վերականգնման ստույգ նախագիծ, որը պետք է մանրամասն լինի և նախորդի վերականգնման աշխատանքներին: Այդ հարցով արդեն սկսվել էր զբաղվել արշավախմբի ճարտարապետ, ճարտարապետության թեկնածու Ալեքսանդր Սահինյանը: Կ. Վ. Տրեվերը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրում և չափագրում էր տաճարի թափված քարերը:

Մի օր առավոտյան, երբ Օրբելին ու Տրեվերը զրուցելով շարժվում են դեպի ամրոց, փողոցում մի պառավ կին մոտենում է և խոնարհվելով Օրբելուն ու նկատի ունենալով նրա **թեթև** վերարկուն, **մանավանդ փառահեղ** մորուքը, ասում է՝

— Օրհնյա, տեր հայր:

Օրբելին իսկույն պատասխանում է՝

— Աստված օրհնե, զավակըս,— թեև պառավը տասնյակ տարիներով ավելի տարեց էր Օրբելուց, բայց դա ընդունված կարգ էր:

— Տերտեր ջան, կարգիդ մեռնեմ, թոռս կնքված չէ, արի՝ կնքի:

Օրբելին պատասխանում է.

— Մայրիկ, ես եպիսկոպոս եմ, կնքելու իրավունք չունեմ, բայց քահանա կուղարկեմ:

Ազատ գետի մի ճյուղը գալիս էր Գեղարդավանքի կողմից, մյուսն՝ արևելքից՝ Վեդու կողմից, երկու ճյուղերն էլ անցնում էին ձորերով և միանում դեռ Գառնի չհասած:

Գյուղացիները մեզ քանիցս ասել էին, թե արևելյան կողմի ձորում, գետակի ձախ ափին խաչքար է կանգնեցված, որի վրա փորագրված արձանագրության մեջ ասվում է. «Ես նայում եմ գանձին, գանձը՝ ինձ»: Նույն բանը հայտնել էին նաև Օրբելուն:

Ես նրան ասացի, որ դա սովորական զրույց է և քարի առձանագրությունը մեզ ծանոթ է, դա իբրև հիշատակ կանգնեցված խաչքար է:

Օրբելին պնդեց, որ երբեմն ավանդույթները ինչ-որ բան նշանակում են, պետք է ստուգել և արդյունքը հայտնել բընակիչներին:

Մի օր աշխատանքից հետո, դեռևս ցերեկ էր, Օրբելու հանձնարարությամբ ձորը իջան հնագետ Հարությունը (որին մենք Տյոմա էինք անվանում), և Լենինգրադից եկած և Գառնիի պեղումներին մասնակցող Ռոստիսլավ Կինժալովը:

Հակառակի պես ամպամածությունը սաստկացավ, անձրև սկսեց կաթկթել: Մենք, մանավանդ Օրբելին, անհանգստացած շարժվեցինք դեպի ամրոցի մուտքը, որի կողքից սկսվում է արևելյան ձորը:

Ամրոցի առջև ձորի եզրի հարթակի վրա Օրբելին մոայլվեց, գնում գալիս էր, անհանգիստ սպասելով տղաների վերադարձին: Վերջապես նրանք երևացին և Օրբելին մոտենալով ձորի եզրին և ձոցից հանելով շիշը, մի փոքր բաժակով կոնյակ հրամցրեց տղաներին, հորդորելով. «Խմե՛ք, մրսած կլինեք»:

Ես հիշեցի Օրբելու հայրական հոգատարությունն իմ ընկատմամբ՝ Լենինգրադում: Ես ուկրաինացի մի արվեստաբանի հետ միասին բնակվում էի Էրմիտաժի շենքում, որտեղ Նևայի առափնյա փողոցի մի դարբաս տանում էր դեպի պալատի բակը, դարբասին կից առաջին հարկում գտնվում էր մի փոքր ճաշարան, որը ըստ պասարկում էր մի քանի տընտեսական (թանգարանի) աշխատողների, իսկ երրորդ հարկում կային մի քանի սենյակներ՝ աշխատակիցների համար: Մենք երկուսով զբաղեցնում էինք մի ընդարձակ սենյակ, որի պատուհանները նայում էին Պետրոպավլովսկի ամրոցին: Ես Երևանի համալսարանի ուսանող էի և թոշակ ստանում էի այդ համալսարանից: Բայց 1937 թ. գարնանը համալսարանի վիճակը խառն էր՝ ղեկավարությունը փոխվում էր և արդեն չորս ամիս է, որ ես թոշակ չէի ստանում ու մի կերպ ապրում էի Լենինգրադի համալսարանի ինձ ծանոթ հայ ուսանողներից պարտք առնելով:

Արդեն սպիտակ գիշերներ էին և ես աշխատում էի նաև գիշերային ժամերին: Սենյակի ընկերակիցս այդ վիճակի մասին հաղորդել էր Օրբելուն, և մի գիշեր, ժամը 2-ին սենյակի դուռը թակեցին ու ներս մտան Օրբելին և Տրեվերը: Նրանք ստիպեցին ինձ, հանվել և պառկել քնելու, ըստ որում Օրբելին ասաց. «Տղաս, դու հարավի բնակիչ ես, այստեղ կարող ես լուրջ կերպով հիվանդանալ»: Ապա նա պընդեց, որ ցույց տամ, թե որքան փող ունեմ:

Վիճակը պարզ էր և Օրբելին նույն օրը հեռագիր հղեց համալսարանի ղեկավարի և կառավարության նախագահի անունները: Երկու օր անց, ես թոշակս ստացա:

Օրբելին Գառնիի հնագիտական արշավախմբի երիտասարդներին խորհուրդ էր տալիս հավաքել տեղի և մերձակա վայրերի հուշարձանների վրա հանդիպող վիմագիր արձանագրությունները, մանրամասն բացատրելով այդ աշխատանքը կատարելու կարգը ու եղանակները:

Գառնեցիները քանիցս խընդրել էին, որ Օրբելին զեկուցումով հանդես գա գյուղի հասարակության առջև, բայց նա տարակուսում էր՝ երկար տարիների ընդհատումից հետո, արդյո՞ք կկարողանա հայերեն զեկուցել: Վերջապես համաձայնվեց:

Գյուղի ակումբը լեփ լեցուն էր, շատերը կանգնել էին բակում: Սկզբում Օրբելին մի փոքր դժվարացավ, ապա բացվեց և մի փառահեղ զեկուցում կարդաց: Տուն վերադարձին ակադեմիկոսն ապրում էր մեծ ոգևորություն և գտնում էր, որ հրաշքը կատարվեց հայրենի հողում:

Բաբկեն ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ակադեմիկոս

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 դ, հեռախոս՝ 22-44-26:
«Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչություն: Դասիչ՝ 69288, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 21.04.98 թ. (3434—3442):

Թերթի հովանավորն է «ԿԱՆԱՉ» ՓԲԸ

«ГИТУТЮН» («Наука») — газета НАН РА

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՐԹԻ ԱՅՍ ՀԱՄԱՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼ Է ՀՀ ԳԱԱ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ—ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ